

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 1931 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻԻ 3-4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԲԸ ԵՐԲ ՊԻՏԻ ՍՊԻԱՆԱՅ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ

ՏՐ. Ճ. ՄԷՐԻԼ

ԲԻԶՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՅ

ՎԵՐ. Կ. ՍԹԱՄՊՈԼԼԵԱՆ

ՍԷՐԸ՝ ԲՍ.Ի ՕՐԷՆԲԻՆ ԼՐԱՑՈՒՄԸ

ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿԶ

ՆԱՊՈՆԻՏԱՍ ԻՆԶՈՒ ԳԱՀԸ ԶԳԵՑ

ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿՈԶՈՒՄԸ

ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

ԱՐԵՒ. ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԷ

ՏՈՐԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՊԻԼԻ ՍԸՆՏԷՑ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԲՍ.Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԹՐԴ. Բ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

ՅՐԹ. Ա. ՎԱՍՈՅԵԱՆ

1930Ի ԳԻՏԱԿԱՆ ՅԱՌԱԶՍՑՈՒՄՆԵՐԸ

ՏՈՐԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՄԱՍՈՒԼ

ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, արեւելահայ բաժնեգրիցն է 150 զրուշ սուրի Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր էթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոսթի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առաջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ՁԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԻՔ ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն համար իւրաքանչիւր տողին գինն է 10 զրշ. սուրիական. վեցամսեայ և աւելի երկարատե Ծանուցումներու պայմանները հասկնալու համար գիմել «Նոր Աւետաբեր»ի, B. P. 287, Alep.

ՄԻ՝ ՈՒՇԱՆԱՐ

ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-Ի ՄՐՑՈՒՄԻՆ

ԶՐԻ Ուսթըրմէնի ինքնահոս գրիչ մը կամ ֆրանսկն. Lip զըրպանի ժամացոյց մը պիտի տրուի բոլոր անոնց որ 1931, Յունիս. 1 էն մինչև Մարտ 1, 16 բաժանորդներ կը գտնեն և անոնց լման բաժնեգիրները գանձելով կը ղրկեն մեզի:

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

16 ՏԱՐԵԿԱՆԷ ՎԱՐ ԵՐԿՍԵՒ ԲՈԼՈՐ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

1931 ի միջոցին

Գրել ունէ պատմուածք կամ իրական օւնէ պատմութիւն մը, որ պիտի ըլլայ

1. Մաքուր ու ուղիղ լեզուով մը,
2. Հետաքրքրական և կրթիչ,
3. Ոչ աւելի քան 150 բառերէ բաղկացած,

4. Թարգմանութիւն կամ ինքնատիպ երևակայութեան արդիւնք, կամ ունէ ազբիւրէ մը լսուած և յիշողութենէն վերարտադրուած: Թարգմանութեանց և յիշողութենէ վերարտադրութեանց ազբիւրները պէտք է յայտնուին:

Ուսանողները իրենց գրութիւնները պէտք է յանձնեն իրենց պատկանած դպրոցին տնօրէնութեան, որ աշակերտին տարիքը և գրութեան անոր պատկանիլը հաստատող երկտողով մը պէտք է ղրկէ խմբագրութեան:

Մրցումը պիտի սկսի Յունուար 1 ին և պիտի տեւէ մինչև Մարտ 1, որուն միջոցին առաջնութիւնը չահողը պիտի ստանայ 300 զրուշ սուրի. , Բ. աստիճանը չահողը 200 զրուշ սուրի. և Գ. աստիճանը չահողը 100 զրուշ սուրի.:

Շահող կամ չչահող ունէ մէկ գրութիւն երբ յարմար տեսնուի պիտի հրատարակուի ՄԱՆԿԱՆՑ ԷՋԻՆ մէջ:

Չչահող դպրոցականները իրաւունք պիտի ունենան կէս գինով «Նոր Աւետաբեր» ստանալ, որ պիտի ղրկուի իրան 75 զրուշ սուրիական ղրկէ խմբագրութեան: Երբ մրցումի առաջին շրջանը լրանայ, պիտի սկսին Բ. և Գ. շրջանները յաջորդաբար: Շահողները կրնան ամէն շրջանին մէջ ալ մասնակցել:

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 1931 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻԻ 3-4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐՔԸ ԵՐԵ ՊԵՏԻ ՍՊԵԱՆԱՅ

«Սիոն» իր 1931 Յունվարի թիւին մէջ շունդալից խմբագրական մը կը հրատարակէ «Մօրը Վէրքը չէ Սպիւնցած» խորագրով, քննադատական յարձակողական թոնով, և զոր գրեթէ նոյնութեամբ կ'արտատպենք «Նոր Աւետարեբ» ի ներկայ թիւին մէջ:

Ինչպէս որ յօդուածէն կը յայտնուի անոր հրատարակութեան առիթ տուած է Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցիին ներքին դժուարութիւնը և նորակազմ «Աւետ. Դաւանութեան Պաշտպանութեան Ուխտ»ի հրատարակած ծանօթ յայտարարութիւնը: Կարճ բացատրութեամբ խնդիրը սա է. Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցիին անդամներէն մէկ մասը իրենց հովիւին վարդապետութիւնները և հաւատոյհանդանակը հակաւետարանական կը գրտնեն և կը պահանջեն անոր հրաժարումը: Իրենց այս փափաքը իրագործելու մէջ դժուարութեան բաղխելով ներքին պարզ դժուարութիւն մը սուր պայքարի կերպարանքը կ'առնէ: «Ուխտը» իր ծանօթ յայտարարութիւնը և Գահիրէի Եկեղեցիին ժողովները հովիւին հաւատայ հանդանակը հրատարակելով խնդրին աւելի ծանրակշիռ հանգամանք մը կուտան:

Այս խնդիրը մի քանի տարուան պատմութիւն մը ունի, և ցաւալի է որ ներկայ անախորժ վիճակին հասած է: Նպատակ չունինք հոս այս խնդրին շուրջ կանխահա զատում մը ընել: Բայց կը խորհինք թէ այսպիսի խնդիր

մը կանուխէն պէտք էր Սուրբոյ Աւետ. Միութեան Վարչութեան յայտնուիլ, իբր իրաւասու բարձրագոյն մարմին մը, յարմար լուծում մը գտնելու համար:

«Սիոն» յարմար առիթ մը կը նկատէ այս՝ իր խմբագրականով Աւետ. Եկեղեցիին քննադատելու, և զայն ընդհանրապէս, և «Ուխտ»ի յայտարարութիւնը խմբագրողներուն նման խորհողները մասնաւորապէս Առաքելական Եկեղեցիին ծոցը հրաւիրելու:

«Մեր կարծիքով յատկանշական է» այս խմբագրականը, ցուցնելու անոր ետին պահուած մտայնութիւնը, Հայ Աւետ. Եկեղեցիին հանդէպ սնուցուած հոգեկան վիճակը, Աւետ. Եկեղեցիին ծագման, մէկ դարու փորձառութեան, ներկայ վիճակին և եկեղեցական ու դաւանական արժէքներուն մասին «Սիոն»ի ըմբռնումներն ու գնահատումները: Կարելի չէ մեկ յօդուածով այս յիշուած բոլոր կէտերը հոս շօշափել, որոնց մեծագոյնին մասին արդէն խօսած ենք «Նոր Աւետարեբ»ի 1929, 11—15 թիւերուն մէջ:

Արհամարհոտ կեցուածք մը առաջին անգամ ուշադրութիւն կը գրաւէ: Կը կարդանք. «Աւետարանական կոչում (ընդգծումը մերն է) Հայ Քրիստոնեայ եղբայրներ», «Թէ որո՞նք, ինչո՞ւ այսպիսի միակողմանի տեսութիւն մը, որ ռաւիկիին հասարակականութիւնն է (ընդգծումը մերն է) ... յառաջ կը քշեն՝ հասկնալի է.», «Ծանօթ են այն հանգա-

մանքները որոնց ներքե «Հայ Աւետարանական հասարակութիւնը» (մկղեք) բաժնուեցաւ . . . » «Նոր Աւետարներ»-ի անշեղ ուղղութիւնը եղած է անկեղծ յարգանք տածել Հայ Առաք. Եկեղեցիին հանդէպ, միշտ գնահատելով անոր իրական արժէքներն ու ծառայութիւնները: Բայց «Սիոն» առիթը չի փախցներ վերաւորիչ որակումներով ակնարկել Հայ Աւետ. Եկեղեցիին, օր մը Ընդհանրական Եկեղեցիէն դուրս հռչակելով ուրիշ օր մը եկեղեցի բառն իսկ զլանալով անոր: «Սիոն» ինչպէ՞ս կը համարձակի այս ընել, կամ ուսկի՞ց կ'ստանայ այն հեղինակութիւնը, որով իբր վերին դատաւոր վճիռներ կ'արձակէ, և եկեղեցիի մը մէջ պառակտում յառաջ բերելու փորձեր կ'ընէ:

Կրօնական եկեղեցական խնդիրներու մէջ հեղինակութեան հարցը շօշափելով կը քննադատէ Աւետարանական Եկեղեցիի գաղափարը և հակասական կը գտնէ «յիշեալ յայտարարութեամբ բողոքողները»: «Սիոն» կատարեալ ազատութիւն ունի այս մասին աւետարանական տեսակէտը չ'ընդունելու: Բայց կ'ուզենք հարցնել թէ ո՞վ իրաւունք տուած է կարգ մը եկեղեցականներու որոնք միատեղ գալով Ս. Գրքին մէջէն կամ զրաէն յաճախ իրենց խելապառակէն խրթին բանաձեւերով տկուտներ խմբագրեն եւ իբրեւ անփոփոխելի պատգամներ զանոնք պարտադրեն բոլոր քրիստոնեաներուն: Հին եկեղեցիներու կարծիքին համեմատ կրօնական հեղինակութիւնը եկեղեցական տիեզերական կամ մասնաւոր ժողովներուն կը պատկանի, որուն անկ է վճիռ արձակել կրօնական ամէն կարգի հարցերուն մասին, իսկ աշխարհականներու բաժինն է կրաւորաբար ընդունիլ պանոնք: Անոնց համար հեղինակութիւնը արտաքին է, իսկ աւետարականներու՝ համար ներքին, որոնք խղճի կատարեալ

ազատութեան գաղափարը կը պաշտպանեն: Հետեւաբար թէ՛ «Ուստը» խմբագրողները և թէ՛ հովիւը իրենց այդ իրաւունքին սահմանին մէջ կը զբաւնուին, թէպէտ ազատութեան այդ իրաւունքը աւելի իմաստուն և շինիչ կերպով կարելի էր գործածել:

Աւետարանականները Նիկիական Հանգանակը կ'ընդունին ոչ անոր համար որ ան հեղինակաւոր մարմինն է մը, տիեզերական ժողովն է մը, խմբագրուած է, այլ անոր համար որ Քրիստոսի Աւետարանին կը համաձայնի, և ան՝ մարդկային յղացումը եղող իմացական տարազէ աւելի շարք մը իրողութիւններու պարզ թուումն է, — կուսական ծնունդ, Քրիստոսի աստուածութիւնը, հրաշքները, խաչի վրայ մահը, «նովին մարմնով» յարութիւնը, համբարձումն ու երկրորդ գալուստը և այլն — որոնք կը կազմեն Աւետարանական Եկեղեցիին գաւառանքը:

Գալով կեանքի և դաւանանքի փոխյարաբերութեան «Սիոն» դատումը միակողմանի և թերի կը գտնենք երբ դաւանանքի վրայ կը ծանրանայ և կեանքը գրեթէ կ'անտեսէ: Այս երկուքը իրարմէ անբաժան են, իրարու կ'ազդեն փոխադարձաբար, ունէ մէկը առանձինն սխալ է: Բայց պէտք է ըսել թէ դաւանանքը կը ծնի կեանքէն, ինչպէս որ Նիկիական Հանգանակը հիմնուած է Քրիստոսի կեանքին վրայ:

«Սիոն» իր խմբագրականին վերջին հատուածով Առաք. Եկեղեցիին ծոցը կը հրաւիրէ Հայ Աւետարանականները, իբր իր գաւառները (թերեւ անառակ) որոնք իրենց մօր սիրտը վերաւորելով տունէն հեռացած են: Եւ կը հարցնէ. «Յայտարարութիւնը խմբագրողներուն նման Հայ Աւետարանականները՞ր կոնէ ի՞նչ բան կը բաժնէ արդեօք Մայր Եկեղեցիէն»: Ասոր պատասխանը նոյն իսկ այդ Յայտարարութիւնն է, որուն խմբագիրները

կը հաւատան կրօնական բոլոր հարցերու շուրջ խզի կատարեալ ազատութեան որուն թոյլատու չեն հին եկեղեցիները: «Սիոն» կը շարունակէ. «Այետոյ Հայ Աւետարանականութեան շուրջ մէկ դարու կեանքի փորձառութիւնը կ'առաջնորդէ՞ այն եզրակացութեան թէ տակաւին հարկ է իրեն համար մնալ բաժնուած:» Ասիկա կը մատնէ այն մտայնութիւնը որ շատ թիթեւ և անիրատես կերպով կը դիտէ ու կը դատէ աւետարանականութեան ծագման պարագաները և անոր ամբողջ մէկ դարու պատմութիւնը: Հայ Աւետ. և Հայ Առաք. Եկեղեցիներուն մէջ տեղ վարդապետական, վարչական և ծիսական (ոչ դաւանական) մեծ տարբերութիւններ կան որոնք ասիէ մէկ դար առաջ զանոնք իրարմէ բաժնած են և տակաւին կը բաժնեն: Բաժանման պատճառները գրեթէ են այնպէս ինչպէս որ էին մէկ դար առաջ: Հայ Աւետ. եկեղեցին հաճուած է որ հայ կրօնական կեանքին մէջ իբր բարեկարգչական ազդակ իր գոյութիւնը տակաւին անհրաժեշտ է: «Սիոն» ի հրաւէրը հետեալ բար կը գտնենք կանխահատ: Նման հրաւէր մը իր արժէքը կ'ստանայ Հայ

Առաք. Եկեղեցին բարեկարգութեան հարցին տուած լուծումէն: Երբ Հայ Առաք. Եկեղեցին բարեկարգութիւնը կ'ըմբռնէ իրր ներքին և ոչ թէ արտաքին գործ մը, զանիկա կը փնտռէ ոչ թէ ձեւերու փոփոխումին, կրճատումին և այլն ի մէջ, այլ հոգիի նորոգութեան մէջ, հետեւելով Աւետարաններու Գլխաւոր ստիճի, և ասոնց համեմատ կը շարժի, ահա այն ատեն նման հրաւէր մը կրնայ նիւթ մը դառնալ: Սակայն անիկա եթէ կատարուի «Սիոն» ի թեթեւօրէն զրուած խմբագրականին թոյով, ասիկա պիտի ծառայէ նոր վերքեր բանալու միայն: Արժէքները գնահատելու պատրաստ, անկեղծ, համակրալիր և յարգալիր հոգի մը միայն կրնայ վերտահութիւն ներշնչել, փոխադարձ սէր արծարծել, սիրտերը միացնել: Եւ եթէ «Սիոն» չի կրնար այսպիսի հոգիով և մտայնութեամբ՝ այս երկու քոյր հասարակութեանց փոխ յարաբերութիւններուն մօտենալ, աւելի լաւ կ'ընէ եթէ կը լռէ՝ նոյն իսկ իր հետապնդած նպատակին օգտակար ըլլալու համար:

Պէտք է նոր լեզու մը գտնել խօսելու համար:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻԻՆԸ

Ամերիկեան Պորտ Միսիոնարական ընկերութիւնը 1930ին լրացուց իր 120րդ տարին: Վերջին տարեկան ժողովին տեղեկագիրէն քաղելով կուտանք հետեւեալ ծանօթութիւնները անոր 1930ի գործունէութեան մասին:

Պորտի 1930 տարուան հասոյթը աւաւելագոյնը եղած է իր բոլոր պատմութեան մէջ, այսօր հանդերձ 6000 ոսկիէ աւելի բացով մը 1930 տարին փակած է: Այս տարուան միջոցին եկեղեցիներու գրամական օժանդակութիւնը 5000 ոս-

կիի չափ պակսած է: 37 նոր երիտասարդ միսիոնարներ դաշտ զրկուած են: ասոնց 17ը ժողովական Եկեղեցիէն և մնացեալը ուրիշ Աւետ. Եկեղեցիներէն են:

Պորտ 20 տարբեր աշխարհագրական շրջանակներու մէջ գործի դաշտեր ունի, որոնց զխաւոսներն են Զինաստան, Հնդկաստան, Ճաբոն, Ափրիկէ եւ Մերձաւոր Արեւելք: Բոլոր այս դաշտերու մէջ մօտ 3000 վայրերը տեւական կրօնական պաշտօններ կը կատարուին, և ա-

նոնց մէջ մօտաւորապէս 300000 հոգիներ Առաքելութեան ժողովուրդը կը կազմեն, իսկ դպրոցներուն մէջ կը գրտնուին մօտ 100000 տղակերտներ: Եկեղեցական նոր անդամները, Ափրիկէի մէջ, հիւսիսային թիւերն հարիւրին 13.5 համեմատութեամբ աւելցած են: Այս համեմատութիւնը Զինաստանի մէջ հարիւրին 10, Հնդկաստանի մէջ հարիւրին 8, Ճաբոնի մէջ հարիւրին 6, Մերձասոր Արեւելքի մէջ հարիւրին 5 եղած է: 1930ի ընդհանուր ծախքը եղած է 560000 ոսկի:

Արեւմտեան Ափրիկէի մէջ յօրեւիտական հանգէս մը կատարուած է 12000 մարդերու մասնակցութեամբ: Այս առթիւ 7 հովիւներ ձեռնադրուած և առաջին անգամ ըլլալով Միութիւն մը կազմուած է, որ եկեղեցիներու վարչութեան մէջ իր բաժինը պիտի բերէ: Այս հանգէսին մէջ 540 երկսեռ անդամներէ կազմուած երգիչ խումբ մը երգած է: Այս շրջանակին մէջ 1877ին 25 եկեղեցական անդամներ կային, իսկ հիմա տեղ մը միայն 3000 անդամներ կան: Ափրիկէի մէջ էն լուրջ հարցը միջեղային յարաբերութիւնն է:

Զինու կացութիւնը կրնան բացատրել հետեւեալ բառերը. — ներքին պատերազմ, հրոսակային արշաւանքներ, սով, արծաթ դրամի անկում: Հակաքրիստոնէական շարժումին ձախողանքը տեղացի քրիստոնեաներու մէջ իրենց համար յաղթանակի զգացումը կը զօրացնէ: Հինգ տարուան աւետարանչական արշաւանքը յաջողութեամբ յառաջ կը տարուի: Չափահասներու մէջ ուսումը տարածելու համար սկսած շարժումին շնորհիւ 30000 մարդեր կարգաւ գրել կը սորվին: Ուսանողները սկսած են հետաքրքրուիլ քաղաքականութենէ աւելի կրօնքով: Դրամի սակաւութեան պատճառաւ խնայողութեան համար դպրոցները երկսեռ կ'ըլլան եւ ձրի քարոզիչներու ասիւի առիթ կը տրուի:

Պոլշովիք նիւթապաշտութիւնը կամ Գրիստոսի գաղափարապաշտութիւնը, ահա այս է գերազոյն հարցը Զինու մէջ:

Հնդկաստանի մէջ քրիստոնեաները մեծ մասամբ արտընկերային դասակարգէն եղած են: Սէյլանի մէջ 3000 հոգի նոց եկեղեցի մը և Պոմպէի շրջանակին մէջ 1300 հոգինոց եկեղեցի մը կայ, մնացեալ 500է աւելի եկեղեցիները գիւղերու մէջ են, և շէնքերը կ'արժեն հազիւ 20—25 ոսկի: Երեցական և ժողովական աւետարանականները միացած են, և ջանքեր կը կատարուին միւս Աւետ. եկեղեցիներն ալ միացնելու: Այս երկրին մէջ քրիստոնէութիւնը հնդիկ քաղաքակրթութեան հետ սերտ յարաբերութեան մէջ կը գտնուի: Հնդիկ միտքը Գրիստոսէ մեծ ազդեցութիւններ ընդունելու մէջ է:

Զեխօ-Սլովաքիոյ մէջ 32 Բող. եկեղեցիները գրեթէ ինքնապահ ըլլալու վրայ են, միջին հաշուով իւրաքանչիւր անգամ տարեկան մէկուկէս ոսկի հոգեւոր տուրք կը վճարէ: Այս եկեղեցիները շատ զգոյշ կը գտնուին նոր անդամներ ընդունելու մէջ, այս նշան մ'է իրենց հոգեւոր կենդանութեան: Իրենց յօրեւիտանին առթիւ նոր հոգեւոր երգարան մը հրատարակած են:

Մէքսիքոյի մէջ Պենտեկոստէի 1900-րդ տարեդարձին մեծ կարեւորութիւն տրուած է, այս առթիւ շատ մը նոր անդամներ ընդունուած են, և հոգեւոր փորձառութիւնը խորունկցած է:

Ճաբոնի մէջ Աստուծոյ Թագաւորութիւնը մեծապէս յառաջդիմած է. օրաթերթերը քրիստոնէութեան մասին յօդուածներ կը նուիրեն, տեղեկութիւններ կուտան: Կառավարական պաշտօնեաներուն, թէպէտ ոչ ուղղակի քրիստոնէութեան մասին, բայց կրօնքի մասին կարելի է խօսիլ: Տոշիշա Համալսարանին (միսիոնարական) նախագահը ծա-

Շար. Տէս Էջ 62 Բ. Սիւնակի սակր

ՔԻՉԵՐՈՒ ՃԱՄԱԾ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. ՍԹԱՄՊՈԼԵԱՆ

Կեանքի չափանիշը քանի կը բարձրանայ անոր մուտքը այնքան կը պըզտիկնայ, ճամբան այնքան կը նեղնայ և անոր մէջ քալողներուն թիւը բնականաբար կը պակսի: Բաղմութիւնը դաշտերուն իսկ առանձնութիւնը լիւներուն մենաշնորհն է:

Քրիստոս է կեանքի բարձրագոյն չափանիշը և նպատակակէտը: Ան է կեանք և ճամբայ. և «վայն գտնողները սակաւաթիւ են»: Եւ

Այս ճամբուն մէջ քալողներու թիւով քիչ ըլլալը անոր արժէքը չի պակսեցընէր: Ընդհակառակը անոր բարձրութիւնը և արժէքը կը ցուցնէ: Անոր մէջ քալողներու և զայն գտնողներու թիւը որչափ ալ քիչ ըլլայ, իրական կեանքի ճամբան է ան: Այս սակաւաթիւներու ճամբուն մէջ ըլլալ՝ կեանք և ոյժ ունենալ կ'ենթադրէ: Քիչերու ճամբան հերոսներու ճամբան է: Սակաւաթիւներու ընկերակցութեամբ ամայի շաւիղներու մէջ քալել՝ սովորականէն աւելի քաջութիւն կը պահանջէ: Մինչ շատեր յաջողութեան բանալին կը գտնեն կեղծիքի և խարդախութեան մէջ, զիւցազնութիւն է ճշմարտութիւնը սիրել: Մինչ ամէն ոք նենգամիտ մեքենայութիւնը կը փառաբանէ իբր իմաստութիւն և բարձր քաղաքագիտութիւն, կեանքի և ոյժի արդիւնքն է արդարութեան ճամբուն մէջ հաստատամտօրէն քալել: Մինչ մեղքը իր բազմազան ձեւերով իբր ճարպիկութիւն կ'ընդունուի, սրբութեան ճամբուն հետեւիլ մարդուն մէջ մեծ կեանքի և ոյժի գոյութիւնը կը մոտանան: Յիսուս, Պօղոս, Լուսաւորիչ, Լուսեր, Ուէսլի և այլն հերոսներն են այս արահետին, որ զէպի բարձրը կ'առաջնորդէ:

Քիչերու ճամբան թէ՛ մեծերու ճամբան է և թէ՛ մեծցնող ճամբայ է: Անոր մէջ յարատեւել զիւցազնը աւելի զիւցազն կ'ընէ, արդարը՝ աւելի արդար և հաւատացեալը աւելի հաւատքով: Հոն կեանքն ու ոյժը օրէ օր կ'աւելնան: Հանգիստն ու գիւրակեցութիւնը, որ կը սեսնուին մեղքի լայն ճամբուն մէջ, թող մեզ չխաբեն: Այդ խաղաղութիւնը, հանգիստն ու գիւրութիւնը նախ երեւութական են, և երկրորդ հոգիի ամենասոսկալի թշնամին են: Իսկ քիչերու ճամբան վտանգի, դժուարութեան և պայքարի ճամբան է: Իսկ ասոնք սնունդի աղբիւրներն այն կեանքին որ ճշմարիտ հիմի վրայ կանգնուած է:

Ասկէ զատ այն կեանքերը, որոնք ամայի ճամբուն մէջ կը քալին եւ այդ ճամբուն դժուարութիւններուն քաջաբար կը զիմանան, անտեսանելի աշխարհին հետ սերտօրէն յարաբերակից կեանքեր են: Ժշմարիտ քրիստոնեայի ճամբան խոկումի, անձնաքննութեան, աղօթքի, ներշնչումի եւ Աստուծոյ հետ ընկերակցութեան, հաղորդակցութեան ճամբան է: Քրիստոնեայի կեանքը քանի կը սաստկանայ՝ անտեսանելի աշխարհին հետ անոր կապակցութիւնն ու հաղորդակցութիւնը կը զօրանան: Քիչերուն ճամբան շատ հաւատքի եւ Աստուծոյ կախում ունենալու ճամբայ է: Ուրեմն ան՝ սնունդի, կեանքի եւ ոյժի ճամբայ է:

«Պէտք եղածէն աւելի ընտանի յարաբերութիւն՝ խորհրդածութիւնը կ'արգիլէ: Հոգեկան մեծ ուժեր պէտք եղած առիթը չպիտի կրնան գտնել, եթէ մարդ երբեմն մեծ եւ թերեւս անազգու առանձնութեան ծոցը չնետուի:»

Հոգիի մեծ ոյժերը աւելի մեծնալու առիթը՝ ամայի լեռներու մենավայրերէն աւելի՝ պիտի գտնեն այն ճամբուն մէջ որ բազմութեանց մէջէն ոլորուելով կ'անցնի, բայց դարձեալ քիչերու կը պատկանի:

«Ես ալ երբ երկրէ բարձրանամ, ամէնն ալ ինծի պիտի քաշեմ» Յիսուս միշտ երկրէ բարձր ապրեցաւ: Եւ այս պատճառաւ անիկայ միշտ առանձինն էր: Անիկայ ամէն օր խաչուեցաւ: Գողգոթա՝ խաչի ճամբուն պագածնակէտն էր: Այս եզական և բարձր կեցող կեանքն էր որ կրցաւ հոգիները դէպի վեր, իրեն քաշել: Քիչերու ճամբան բարձրագոյն առումով ծառայութեան ճամբայ է: Աշխարհի ստացած գիտական, բարոյական և հոգեւոր բարձրութիւնն ու օրհնութիւնները կը

պարտի՝ Քրիստոսի հետեւողութեամբ բարձրը, առանձին կեցող և խաչուած հոգիներու ազդեցութեան և ծառայութեան: Քիչերու ճամբան բարձրութեան և բարձրացնելու ճամբան է: Ան՝ փրկութեան ճամբան է:

Կեանքի արժէքն ու իմաստը մի՛ փնտռեր քեզ ծափահարող ամբոխին մէջ: Ո՛չ ալ աշխատէ՛ր զայն գտնել քու օրերուդ խաղաղութեան, հանգստութեան և դիւրութեան մէջ: Ի՞նչ բանի համար կը կենաս, անո՛ր նայէ: Դէպի ո՞ւր կ'երթաս, հո՛ն նայէ: Ո՞ր ճամբու մէջ ես, զա՛յն մտածէ: Այս հարցումներուն տուած պատասխանդ եթէ գոհացուցիչ է՝ անվարձուն յառաջ խիզախէ, ճամբագ որչափ ալ նեղ և ամայի ըլլայ շիտակ ճամբան է ան, կեանքի ճամբան է ան: քանզի Քրիստոսի մէջ է ան:

ՍԷՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԷՆՔԻՆ ԼՐԱՅՈՒՄՆ Է

Գրեց՝ ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿԶ

Ի՞նչ է քրիստոնէութեան կեդրոնական տարրը: Շատ պատասխաններ տրուած են այս հարցումին: Ոմանք ըսած են թէ քրիստոնէութեան մէջ ամենակարևոր բանն է թաղայական դռնքիւն մը կամ վարժարան: Քրիստոնեայ ըլլալու համար մէկը պէտք է այսինչը կատարէ եւ այսինչը չկատարէ: Բայց Յիսուս շեշտը երբեք հոս չգրաւ: Շաբաթի, ծոմապահութեան և ուրիշ կարգ մը բաներու մասին, զոր իր դրացիները էական նկատեցին, իր լսածները ցոյց տուին թէ այսպիսի բաներ իրեն համար կարևոր չէին: Պօղոս Անոր վարդապետութիւնը կը մեկնէ կատարեալ ազատութեան տեղ տալով: Ան կ'ըսէ թէ մէկը կ'ուտէ, միւսը չ'ուտէր, մէկը մէկ օրը կը յարգէ, միւսը բոլոր օրերը հաւասարապատիւ կը նկատէ, բայց Քր-

իստոս անոնց բոլորն ալ կ'ընդունի:

Ուրիշ գաղափարի մը համեմատ պաշտամունքի ձևերը էական տարրը կը կազմեն: Հին եկեղեցիները որոշ ծէսերու միջոցաւ փրկութիւնը կ'ընդունին. նոյն իսկ մեր Բողոքական եկեղեցիները մեծ կարևորութիւն կուտան Աստուծոյ տան շաբաթական պաշտօններուն: Բայց Յիսուս ինքը, որ թէպէտ այս պաշտօնները շատ կը սիրէր, խտորէն յանդիմանեց զանոնք որ ցոյցի համար երկարօրէն կ'աղօթէին: Իրողութիւնը սա է որ, Ան՝ պաշտամունքի ունէ մասնաւոր ձև մը հաստատած կամ սորվեցուցած ըլլալ չի թուիր:

Ի՞նչ Բողոքական շարժումին մէջ դաւանանքը կեդրոնական դիրքը զբաղեցնած է: Երբ մարդ մը քրիստոնեայ պիտի ըլլայ որոշ հաւատամք մը

պէտք է ունենայ: Վերջին տարիներու միջոցին կրօնական սաստիկ պայքարները այս կէտին շուրջ մղուած են: Յիսուսի ուսուցումներուն մէջ, սակայն, զարմանալի է որ շատ քիչ բան կայ որ կեանքի իբր պայման՝ դաւանանքի տըրուած այս կարեւորութիւնը հաստատէ, որ կամ անփոփոխելի հաւատոյ հանգանակ մը տայ որուն մասին բոլորը կարենան համաձայնիլ իբր Յիսուսի վարդապետութիւնը: Իրապէս քրիստոնեայ աշխարհի դաւանանքներուն մասին եղած բոլոր պայքարները այնպիսի կէտերու համար եղած են՝ որոնց մասին Յիսուս բան մը ըսած չէ: Նոյնիսկ այն դաւանանքները որոնց մասին բոլոր քրիստոնեաները կը համաձայնին իբր աշակերտութեան պայման՝ Յիսուսի կողմանէ երբեք գծուած չեն:

Յիսուսի վարդապետութեան մէջ, սակայն, աշակերտութեան փորձաքար մը կար զոր ինք անտեղիտալի կը նկատէր: «Մտրդիկ ասով պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք—եթէ զիրար կը սիրէի» (Իմ պատուէրս սա է որ զիրար սիրէք): Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը նկատուած է իբր Անոր հանդէպ սիրոյ յարաբերութիւն մը: Յիսուս՝ ինկած Պետրոսին միայն մէկ հարցում կ'ուզէր: «Ձիս կը սիրես» Բրիտոնէական կեանքի միակ օրէնքը սէր է:

Բոլորս ալ կը համաձայնինք ասոր: Բայց ինչպէս որ օրինականը հարցուց

երբ իր գրացին սիրելու պատուէրը ըստացաւ, մենք ալ կը միտինք հարցնելու թէ «Դրացիս ո՞վ է»: Յիսուսի այս հարցումին տուած պատասխանը Յիսուսի հանդէպ հաւատարմութեան ըրուն փորձաքարն է: «Սիրեցէք ձեր թշնամիները» պատուիրանը՝ Յիսուսի օրէնքին մէջ այնչափ հիմնական է որքան որ է «Մի՛ սպաննէր»ը Մովսէսի օրէնքին մէջ: Այն՝ որուն սիրտը բարեկամի և թշնամիի հանդէպ սիրով չէ գրաւուած չի կրնար ըսել թէ ճշմարտապէս Բրիտոսի կը հետեւի:

Ասիկա փորձել անկարելի է. կրնա՞նք մեր թշնամիները սիրել մինչ անոնք մեր թշնամիներն են տակաւին: Դարերու փորձառութիւնը «ոչ» պատասխանել կը թուի: Բայց անոնք որ Բրիտոսի հանդէպ սիրոյ և Անոր հետ ընկերակցութեան գաղտնիքը սորված են, գտած են որ հրաշքը իրենց մէջ տեղի ունեցած է: Մարդ մը՝ որուն սիրտը Բրիտոսի հանդէպ սիրով իրապէս լիցուած է՝ ինքզինքը կարող կ'զգայ Յիսուս սիրոյ օրէնքին տառացիօրէն հնազանդելու, նոյնիսկ սիրելու զանոնք որ զԱյն չարամտօրէն կը հալածեն:

Այս համոզող, յաղթող սիրոյ պակասութիւնը՝ Յիսուսի եկեղեցին պարտութեան մատնած է անցեալին մէջ: Երբ սիրոյ գաղտնիքը սորվինք աշխարհը Բրիտոսի համար գրաւելու բանալին գտած պիտի ըլլանք:

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՆԱՊՈՆԻՏԱՍ ԹԱԳԱՒՈՐ ԳԱՂԸ

ԲԱՂՏԱՍԱՐԻՆ ԹՈՂՈՒՅ

Science News Letter թերթը իր 1931 Յունիւլ. 24 ի թիւին մէջ հրատարակուած յօդուածով մը շահեկան տեղեկութիւններ կուտայ այս մասին: Դանիէլի Կրքին մէջ նկարագրուած կը

գտնենք Բաղտասար թագաւորի սարքած արքայական խնջոյքը և Պարսիկներու կողմանէ Բաբելոնի գրաւումը: Մինչդեռ պատմութիւնը մեզի կը յայտնէ թէ Բաբելոնի թագաւորը Նապոնի-

տաս էր, և Բաղտասար՝ անոր գահա-
ժառանգ անգրանիկ որդին:

Մեզի հասած կարգ մը սեպագրու-
թիւններ, Նապոնիտասի կեանքին պա-
րագաները և դէպքերը շատ անգամ
գրեթէ մանրամասնութեամբ մեզի ծա-
նօթացուցած են: Նապոնիտաս հաւա-
նաբար 60 տարեկան էր երբ իր հօրը
Նաբուգոդոնոսորին յաջորդեց, և Յ տա-
րի Բաբելոնի մէջ իշխելէ ետքը ըրաւ
զինուորական արշաւանք մը, որուն մի-
ջոցին թիմէ անուն քաղաքը գրաւեց և
անոր թագաւորը իր սուրովը նպանեց:
Այս յաջող արշաւանքէն իբր յաղթական
փոխանակ իր մայրաքաղաքը վերա-
դառնալու՝ իր արդէն խլրտուն գահը իր
որդիին, Բաղտասարին, թողուց և ինք
առանձնացաւ իր այս նոր գրաւած քա-
ղաքը, և զայն վերաշինեց և վարդարեց
Բաբելոնի հաւասար գեղեցկութեամբ:

Տր. R. Dougherty երեք տարբեր
արձանագրութիւններու ընթերցումէն
վերջ կը հաստատէ թէ թիմէ քաղաքը
ներկայ թէյմէ կոչուած վայրն է, որ
Երուսաղէմի և Մէքքէի ճիշդ մէջտեղը,
Արաբիոյ անմատչելի մէկ անկիւնը, գե-
ղեցիկ ովասիս մըն է: Մինչև հիմա
հօթը խուզարկուներ այս խորհրդաւոր
վայրը այցելած են, ուր սակայն կարճ
ատենի մը համար կենալու և աւերակ-
ները հազիւ հեռուէն դիտելու թուլա-
տուած են: Արաբներու կասկածամտու-
թեան և անբարեացակամութեան պատ-
ճառաւ:

Նապոնիտաս նշանաւոր եղած է իր
կրօնական ջերմեռանդութիւնները և հը-
նութիւններու հանդէպ իր տածած
գուրգուրալի յարգանքովը: Աշխար-
հիս ծանօթ ամենահին հնագէտներէն
մէկը եղած է: Անիկայ մեծ ջանքեր
թափեց հին տաճարները վերաշինելու,
հնութիւնները պաշտպանելու և մանա-
ւանդ Լուսնի աստուծոյն պաշտօնը ընդ-
հանրացնելու և Բաբելոնի աստուածներ

ըսեն մէջ անոր առաջնակարգ դիրք մը
ապահովելու համար: Իր նախահայրե-
րուն հայրենիքը, Հաբան, Լուսնի աս-
տուծոյն մէկ հին տաճարը պիղել տը-
ւաւ, անոր բոլոր մասերը և ճարտարա-
պետական կառուցուածքը գիտական-
օրէն ուսումնասիրեց և զայն վերաշինեց:
Բաբելոնի ժողովուրդը շատ նախանձա-
խնդիր գոնուեցան իրենց աստուածնե-
րուն համար, և թէպէտ իրենց ծանօթ
էր Լուսնի պաշտամունքը, բայց երբեք
չուզեցին անոր առաջնութիւն տալ, հե-
տեւաբար կատաղի կերպով ընդդիմա-
ցան Նապոնիտասի այս մասին կատա-
րած բոլոր ջանքերուն, որոնք ծառայե-
ցին զինքը ոչ-սիրելի ընծայելու իր հը-
պատակներուն առջև: Սհա այս կէտը
կը լուսաբանէ Նապոնիտասի խորհրդա-
ւոր կեանքը: Այս կրօնական հարցը, և
մայրաքաղաքի եռուզեռը սիրելէն աւե-
լի գիտնականի առանձնասիրական մի-
տումը՝ պատճառ եղան որ այս անժողո-
վրդական հնագէտ թագաւորը՝ անապա-
տի լուծթեան մէջ բոյն զրած այս ովա-
սիս քաղաքը իրեն բնակավայր ընտրէ,
որ ծտարի ապրեցաւ և իր նախասի-
րած Լուսնի աստուծոյն պաշտամունքը
փառաւոր հանդիսութիւններով հաս-
տատեց: Թերևս այս պատճառաւ է որ
անոր անունը Դանիէլի գրքին մէջ չի
յիշուիր, և Բաբելոնի Պարսիկներու կող-
մանէ գրաւումին միջոցին գահին վրայ
Բաղտասար կը գտնուէր: Շատ հաւա-
նական է որ այս կրօնական հարցը մեծ
բաժին մ'ունեցաւ Բաբելոնի անկումին
մէջ, որուն բնակիչները կը յուսային որ
Պարսիկները պիտի յարգեն իրենց հա-
տակներուն կրօնքը:

Դամերը Բրիտանոսը խաչին վրայա-
մըրցուած չպիտի պահէին եթէ սէրը
զինքը հոն չգամէր:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՈՉՈՒՄԸ

Գրեց. ՎԵՐ. ԵՂԻԱ ՔԱՍՏՈՒՆԻ

Եսա. Խր. 6:

Պիսի Եր Հայ Աւետ. Եկեղեցի մը գտնուի
ու կազմել: Շատեր այս հարցումին ժըխ-
տական պատասխան կուտան, մանա-
ւանդ Աւետ. Եկեղեցիէն չեղողներ: Բայց
թերեւս գտնուին նաեւ բուն իսկ Աւետ.
Եկեղեցւոյ գաւազներէն այնպիսիներ
որոնք կը խորհին թէ պէտք չկար Հայ
Աւետ. գատ Եկեղեցի մը կազմելու: Սա-
կայն մենք կը պնդենք որ հարկ կար ա-
նոր, եթէ ոչ անիկա բնաւ գոյութիւն
պիտի չ'առնէր: Մենք կը հաւատանք
թէ ամէն եկեղեցւոյ մէջ փրկութիւն կա-
րելի է. բայց Աւետ. Եկեղեցին շատ ա-
ւելի յարմար է հոգեւոր կեանքի մը շա-
կումին ծառայելու՝ իր գուտ Աւետ. գա-
ւանանքովը, Աստուծոյ խօսքին քարո-
զութիւնովը, իր պարզ ու ժողովրդա-
կան կազմակերպութեամբը, իր ազօթա-
ժողովներովը, Կիրակն. Դպրոցներովը,
և այլն:

Աւետ. Եկեղեցին ի՞նչ սկզբունքներու հա-
մար կը կենայ.—(ա) Փրկութիւնը ձրի է՝
Թիսուս Բրիստոսի վրայ հաւատքով. իսկ
հաւատքն է՝ պարզապէս ընդունիլ Աս-
տուծոյ առաջարկած թողութեան պար-
զը. մեղաւորը հաւատքով կ'արդարա-
նայ. նաեւ «արդարը հաւատքէն պիտի
ապրի», այսինքն՝ Բրիստոսի յանձնուե-
լով և Անոր հետ հոգեւորապէս միանա-
լով:

(բ) Աստուծոյ խօսքին ազատ ուսում-
նասիրութիւնը՝ մարդուն իր հասկցած
բնիկ լիզուովը: Մարթին Լուտեր այս
երկու սկզբունքները միասին յառաջ
տարաւ:

(գ) Աւելորդապաշտութիւններէ, ա-
ւանդութեան կաշկանդումներէ, բայց
արարողութիւններէ զերծ և ազատ,

պարզ ու հոգեւոր պաշտամունք մը,
«Հոգւով ու ճշմարտութիւնով» երկըր-
պողել Աստուծոյ՝ ինչպէս Աւետարանը
կը պահանջէ:

(դ) Քանի որ վերստին ծնունդն
է հոգեւոր կեանքին սկզբնաւորութիւնը,
ջանալ որ ամէն անհատ վերստին ծնուն-
դը ունենայ գիտակցօրէն:

(ե) Սբ. Հոգիի իբրեւ անձնաւոր
էակ ներգործութեան և առաջնորդու-
թեան վստահիլ՝ անհատական և եկե-
ղեցական զործերու մէջ. Անոր զործու-
նէութեան ազատ ասպարէզ տալ մեր
սրտին ու կեանքին մէջ, և այսպէս հա-
ւատքի պտուղն եղող հոգեւոր կեանքը
ապրիլ իրապէս, յաւիտենական կեան-
քը այս աշխարհէն սկսիլ:

(զ) Կրօնքի ըմբռնումն իբրեւ բարո-
յական բարձր նկարագիր շինող ազգակ
մը, իբրեւ սրբութեան սկզբունք մը ընդ-
հանուր կեանքի բոլոր մարգերուն մէջ,
ընտանիքի մէջ, առուտուրի մէջ, ըն-
կերական ու քաղաքական յարաբե-
րութիւններու մէջ, ազգային կեանքի
մէջ և ամէն տեղ անոր թափանցելն ու
տիրապետելը: Ծշմարտասիրութիւն,
ամէն տեսակ սուտէ և կեղծիքէ զգուշա-
նալ, թշնամութեան հոգին մերժել և
սէր մշակել: (է) Ժողովրդական ինք-
նավարութիւն եկեղեցւոյ վարչութեան
մէջ. բայց սա հասկացողութեամբ որ ե-
կեղեցին կը կազմուի վերստին ծնածնե-
րու միութենէն, և հարկաւ այնպիսի
ժողովուրդ մը հոգեւոր իրերու մէջ ինք-
զինք կառավարելու կարող և բաւական
է. կղերական դասակարգը չէ եկեղեցին,
եկեղեցին գլխաւը Բրիստոս ինքն է.
եկեղեցին իր անտեսանելի բայց ամէն
տեղ ներկայ Փրկչին վրայ հիմնուած է,
և ուղղակի Անկէ կը կառավարուի:

Ինչո՞ւ բողոքական եմք—Որովհետեւ վերի սկզբունքներուն կը հաւատանք, համազում ենք որ ասոնք կենսական սկզբունքներ են, որոնց համար կ'արժէ ապրիլ, և զոհողութիւններ ընել ու մինչեւ անգամ զոհուիլ ասոնց համար կ'արժէ:

Ի՞նչ է Աւետ. եկեղեցիին կոչումն ու առաքելութիւնը: Աշխարհի վրայ Յիսուս Քրիստոսի սկսած զորքը չարունակել, ցեղային կաշկանդումներէ ազատ և անխտրական ոգիով ամէն մէկ անհատը առաջնորդել Քրիստոսի փրկութեան, Աստուծոյ սիրոյն և Սբ. Հոգւոյն հաղորդակցութեան: Մեր բնաբանին մէջ Աստուած երկու նպատակ կ'առաջադրէ մարգարէին. նախ, իր ազգին վերականգնումին ծառայել, բայց կ'ըսէ թէ պղտիկ բան է միմիայն այս նպատակին ծառայելը. ուստի երկրորդ և աւելի մեծ նպատակ մը կ'առաջադրէ անոր. «Ահա քեզ ազգերու լոյս պիտի ընեմ, որպէս զի մինչեւ երկրի ծայրը իմ փրկութիւնըս ըլլաւ»: Ինքզինք Ազգային անուանող մեր Հին Եկեղեցին իրեն միակ նպատակ ընտրած կ'երեւի լոկ ազգային գոյութեան պահպանումին ծառայել, որով երկրորդ և աւելի մեծ նպատակը բոլորովին անտես թողած է դարերէ ի վեր: Ուստի ի՞նչ է Հայ-Աւետ. Եկեղեցին կ'ուզէ մասնաւորապէս այս երկրորդ նպատակին ծառայել, հարկաւ առանց առաջինն ալ զանց ընելու. ո՞վ կրնայ իրաւունք ունենալ զինք այս նպատակէն հեռացնելու և կամ իր գոյութիւնն անհրապտակ համարելու: Ուստի այդ հարցումին թէ կ'արժէ՞ Հայ Աւետ. զատ համայնք մը ապրեցնելու ջանալ, կըրնանք համարձակօրէն պատասխանել թէ Այ՛ո, կ'արժէ: Թէ՛ մեր ազգին բարձրագոյն օգտին համար, Հայ Լուս. Եկեղեցւոյն մէջ փափաքուած հոգեւոր վերադարձնումի յառաջ գալուն ղէթ անուղղակի նպաստելու համար, և թէ՛

Աստուծոյ թագաւորութեան աւելի ընդարձակ և անյետաձգելի ընդհանուր գործին համար, պէտք է և շահաւոր է որ Հայ Աւետ. զատ եկեղեցի մը պահպանենք:

Ի՞նչ են ուրեմն ակնոր գոյութիւնը պահպանելու միջոցները:—Նախ և առաջ համոզուիլ այս երկրին մէջ Հայ Աւետ. Եկեղեցւոյ մը գոյութեան օգտակար և անհրաժեշտ ըլլալուն: Ինքնապահպանութեան գլխաւոր միջոցն է հաւաստեալի ղեկավարութիւնը, խանդավառութիւնը մեր եկեղեցիին յատուկ և վերահպատակովը, գիտակից ըլլալ մեր արտօնութեան, և յոյս ունենալ մեր եկեղեցիին ապագային մասին: Անիկա մեծ գործ մ'ունի իր առջեւը կատարելու, և վստահ ըլլանք որ Աստուած պիտի չլքէ զայն՝ որչափ ատեն որ անիկա հաւատարիմ է իր կոչումին և լծուած իր առաքելութեան կատարումին:

Ուստի, (1) գնահատենք մեր արտօնութիւնն ու ճանչնանք մեր առաքելութեան ընդարձակութիւնը, գիտակից ու հաւատարիմ ըլլանք մեր կոչումին, հաւատանք թէ Աստուած մասնաւոր բարձր նպատակի մը համար մեզ կանչած է: Հայ Աւետ. Եկեղեցին պատահական ղեկավարէ ծնած չէ, զիպուածի արդիւնք չէ. ոչ ալ դժբախտութիւն մը է անոր զուտ գոյութիւնը, հապաամենամեծ բարիք մը. անոր կազմութիւնը պատմական սխալ մը չէ, այլ Աստուծոյ բարերար նախախնամութիւնով ու յատուկ կարգադրութիւնով եղած բան մը: Հայ ազգը Աւետ. Եկեղեցւոյ մը կազմութիւնովը կորուստ ունեցած չէ, անհուն հաւատ չահած է, անթուելի բարիքներ վայելած է անոր շնորհիւ: Ապերախտութիւն է զայն ուրանալը: Զմոռնանք նաեւ Գամաղիէլի իմաստուն վճիռը թէ երբ կազմակերպութիւն մը կամ շարժում մը լոկ մարդկային է՝ ուչ կամ կանոնաւոր կը քայքայի, իսկ երբ Աստուծոյ

է անոր գոյութիւնը, մարդկային միջոցներ չեն կրնար զայն քայքայել: Օրինակ՝ Քէսապի Աւետ. Եկեղեցին կազմուած է ասկէ 77 տարի առաջ 1853 Ապրիլ 15 ին, իբրեւ չորրորդ Կիլիկիոյ շրջանակին մէջ կազմուած Հայ Աւետ. եկեղեցիներու, և նոյն տարին անոր վերայ առաջին հովիւր ձեռնադրուած է, երբ ժողովուրդին թիւը գրեթէ 400 հոգի էր արդէն. 1859 ին անոր ժողովարանի շէնքը շինուած է, ինչպէս ճակատաքարին արձանագրութենէն տեսայ: Աստուած, որ այդչափ կանուխէն զայն յառաջ բերած է և այդչափ վառնգներու և փլուզումներու մէջէն անցընելով մինչև այսօր պահպանած, միթէ կարելի՞ է որ զուր տեղը ըրած ըլլայ ասոնց ամէնը:

(2) Հաւատանք թէ վերը համարուած եօթը սկզբունքները անհրաժեշտ և արժէքաւոր բաներ են, նաեւ գործադրելի, և վստահ ըլլանք թէ Աստուած մեր ամէն մէկ եկեղեցիին ձեռքով ալ զանոնք պիտի իրագործէ, և յոյսով լիցունք: Անոր երաշխաւորը մեր Փրկիչն է, մեռնող, բայց յարութիւն առնող և յաւիտ-

եանս կենդանի Տէրը: Կրնանք փոքր համայնք մ'ըլլալ, բայց եթէ կենսունակ ենք, հոգեւոր կեանքով լիցուն ենք, տարբերութիւն չ'ընենք. մանրիկ մանանեխի սերմնահատ մը որ իր մէջը կեանք ունի, աւելի զարաւոր է քան ահապին ժայռը: Բայց ասկէ զատ, չմոռնանք որ մենք Աւետարանական մեծ մարմինն մասն ենք, թէ մեզի համար խորհողներ և աղօթողներ կան աշխարհիս ամէն կողմը, երկրի բոլոր ազգերէն:

(3) Մեր Աւետ. առաքելութեան գործադրումին նուիրուինք բոլորովին և եռանդով աշխատինք անոր համար: Կրօնքի համը և հրճուանքը ասոր մէջ է: Անդադար աշխատինք Քրիստոսի համար նորանոր հոգիներ շահելու. մեր իբրեւ կրօնական վատ համայնք մը գոյութեան արժէք և իրաւունք տուողը այս պիտի ըլլայ: Հաւատարիմ ըլլանք, ինչպէս մեզ կանչողը հաւատարիմ է:

Հաւատքով աղօթենք միշտ, և յաջողութիւնը վերէն, մեր երկնաւոր Հորմէն պիտի գայ:

ԱՐԵՒԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԷ

Գրեց՝ ՏՈՒԹ. Ա. ՃԵՊԷՃԵԱՆ

Համայն մարդկութիւնը անհամար դարերէ ի վեր արեւը իբր հիւանդութեանց զարման և իբր կենաց աղբիւր նկատած է, ահաւասիկ այս պատճառով է որ զրազաշտական կրօնքը մինչև այսօր և մեր նախնիքը մինչև քրիստոնէութեան թուականը արեւը իբր Աստուած պաշտած են: Արեւու ճառագայթները՝ կարմիրէն սկսեալ մինչև մանրշակի գոյնը՝ եօթը գոյներու հաւաքածոն է, անոր լոյսը՝ այս եօթը գոյներէ զատ անդրմանիչական գոյներ ալ կը

պարունակէ զոր մեր աչքերը չեն կրնար տեսնել. ո՞վ գիտէ դեռ քանի եօթնակ հրաշալի գոյներ կան որոնք տրեւեալ ճառագայթներուն մէջ թաղուած են: Ահա այս անդրմանիչական ճառագայթներն են որ միքրոպները մեռցնելու և մեզ բուժելու կարողութիւնը ունին. չկայ միքրոպ մը որ հինգ րոպէ ուղղակի արեւու ճառագայթներուն ենթարկուի ու չմեռնի: Արեւու ճառագայթները բնութեան մէջ ի՞նչ հրաշալի գործեր կը տեսնեն, բոյսերու տերեւներուն ու ար-

մատնեցումն մէջ, նոյնպէս օղի, ջուրի և հողի խորհրու մէջ տեղի ունեցած քիմիական ահադին գործողութիւններ այս ճառագայթներու շնորհիւ յառաջ կը տարուին: Արեւելեան մեծ քաղաքի մը փողոցներուն մէջ արեւածագէն առաջ քալած ժամանակդ այլեւայլ պարշահոտութիւններ կ'առնես, արեւը թող ծագի և մի քանի ժամ վերջը այդ գէշ հոտերը գէպի անապատ քշուող ամպերու կոյտերու նման կ'ոչնչանան, ինչո՞ւ, քանզի այդ վնասակար կապերը տարալուծուելով անվնաս կապերու փոխուեցան:

Վերջին 30 տարիներու ընթացքին թերեւս բոլորական աշխարհի մէջ տեղի ունեցած ամենամեծ յեղաշրջումը արեգնալոյսի միջոցաւ դարմանումի շրջանակին մէջ պատահած է: Ք. ճառագայթները, որ մարդկութեան այսչափ ահապին ծառայութիւններ մատուցած են, արեւու ճառագայթներուն մի մասը կը կազմեն: Արեւու լուսանքը, այսինքն արեւու ճառագայթներուն ուղղակի մեր մօրթի վրայ թափանցումը, այնչափ ընդհանրացած է որ շատ չանցած ջուրով լողանքի չափ կարեւոր տեղ մը պիտի բռնէ: Թոքախտի միջբողներուն՝ մօրթի, մսանի և ոսկորներու մէջ յառաջ բերած վէրքերն ու փտտումները օրական 1-2 անգամ արեւու ճառագայթներուն ենթարկուելով հրաշալի կերպով կը բուժուին: Դառնորդ դար առաջ այս տեսակէն փտտումներու համար, անգամահատութեան գործողութիւններ կատարել սովորութիւն դարձած բաներ էին, իսկ հիմա աններելի սխալներ կը նկատուին:

Կարօտութիւնը մարդս միշտնոր գիտերու մղած է: Մեծ Պատերազմի միջոցին Գերմանիա և Սկովտիա ձկան իւղ չկրցան հայթայթել և իրենց տկար և հիւանդ մանուկները դարմանելու համար ճարհատ արեւու ճառագայթնե-

րուն դիմեցին և գտան որ ձկան իւղի կարօտ հիւանդներ առօրեայ արեւու լուսանքներու ենթարկուելով նոյն արդիւնքը կրնայ ձեռք բերուիլ, և այս կերպով բիւրաւոր հիւանդ մանուկներ դարմանեցին առանց ձկան իւղի: Զբոսական իւղը իր մէջ վիրաւիճ D ըստած կենսատու բաղադրութիւն մը կը պարունակէ, որ Բաքիթիզմի, Սքորպիւթի և այլնի նման արեւոյն և ոսկորի հիւանդութիւնները կը բժշկէ: Հասկըցուած է որ արեւը ուղղակի մօրթին վրայ թափանցելով անոր բջիջներուն մէջ վիրաւիճ D կոչուած նիւթը կը գոյացնէ և մարմնոյն ուրիշ մասերը իրենց կարգին այս վիրաւիճը ծծելով կը կազդուրուին ու կը բժշկուին: Ուրեմն ի՞նչ բաղդաւոր են անոնք որ արեւը առատապէս վայելելու բախտն ունին, շատերու կողմէ արհամարհուած արեւակէզ թխալոյն մօրթը ի՞նչ թանկագին բան մըն է, քանզի արեւէն սեցած այդ մօրթի բջիջներուն մէջ օրհնեալ վիրաւիճ D ամբարուած է, որ մարդուս առողջութիւնն ու ախտերու գէմ պաշտպանութիւն կը նշուիր է: Արեւու ճառագայթներուն ենթարկուելու կերպին, եղանակին և ժամանակի մասին մի ուրիշ առիթով կը ուզենք անդրադառնալ:

Վերը տեսանք որ արեւը կեանք է, միջբողները կ'սպաննէ, ախտերը կը բուժէ, հականեխիչ է, բնութեան մէջ կատարուած բոլոր քիմիական գործողութիւններուն շարժիչ զսպանակը ինքն է: Բայց պարտինք նկատի առնել որ տարւոյն չորս եղանակներուն մէջ արեւու ճառագայթներուն քանակը, որակը ու ժամանակը նոյնը չեն: Ամառը նա աւելի երկայն ժամանակ մեզ կը լուսաւորէ և անոր ճառագայթները մեզի աւելի ուղղահայեաց կուգան, իսկ ձմեռը՝ աւելի կարճ ժամանակ մեզի հետ կը մնայ և անոր ճառագայթները ոչ—ուղղահայեաց կերպով մեզի կը դը-

պին, բայց աստի ձմեռը արեւու լոյսը ամպերու պատճառով մեկմէ կը խլուի։ Արդեօք այս բնական տարբերութիւնները մեր առողջութեան վրայ ազդեցութիւն մը կը բանեցնեն։ այո։

Բոլոր երկիրներու մէջ վիճակագրութիւններով ստուգուած իրողութիւն մ'է որ արեւը որչափ քիչ, մահերը այնչափ շատ են, այսինքն մարդիկ ձմեռը թիւով շատ աւելի կը մեռնին քան թէ ամառը։ Միջրոպներու մեծ թշնամին, արեւու ճառագայթները, ձմեռը թէ՛ տկար են և թէ՛ քիչ ժամանակ մեկի հետ կը մնան, հետեւաբար միջրոպները աւելի համարձակ գործունէութիւն մը կը ցուցնեն և Դիկ., Յունվ., և Փետ. ամիսներուն կարգ մը հիւանդութիւններ յաճախ կը պատահին ու մահերը պատճառ կ'ըլլան։ Զմեռը մահերու շատութեան մի ուրիշ պատճառը ջերմութեան աստիճանին շատ վարիջնալն է որ կրկին արեւու ճառագայթներուն տկարութենէն ծագում կ'առնէ։

Ջերմութիւնը՝ մանաւանդ մեր մարմնոյն կենդանական ջերմութիւնը՝ մեզ պաշտպանող ամենաազդու գէնք մըն է։ Պաղ օդերու պատճառաւ երբ մեր քթին, կոկորդին, ականջին կամ թոքերուն մէջ չըջան ընող արիւնք 37 աստիճանէն քիչ մը վար իյնայ, այն ասին առաջուրնէ նաև ներկայ գտնուող այլազան միջրոպներու համար գործի լծուելու պատեհ առիթը կը ներկայանայ. և ահա թոքատապ, հարբուխ,

թոնսիլ և ականջի բորբոքումներ երեան կուղան, մեր հասարակ լեզուով պաղառութիւն ըսուած գործողութիւնը այս կերպով կը պատահի։

Ուստի՝ տկար, հիւանդոտ ու ծերացած անհատներու համար ձմեռը իրապէս մահէ՛ աւելի սպառնական է, քան զի իրենք տկար, իսկ միջրոպները սովորականէն աւելի զօրաւոր են, զիրենք պաշտպանող արեւու ճառագայթները աւելի՛ տկար և աւելի՛ ցանցաւ են, հետեւաբար պաղառութիւնները աւելի անխուսափելի են։

Զմեռուան եղանակին մի ուրիշ անպատեհութիւնը մեր շնչերակներուն մէջ արեան ճնշման վեր վար շատ փոփոխութեան ենթարկուիլն է, տաքուկ սենեակներէն հլլելով գէրօ աստիճան պաղի ենթարկուելով մեր մօրթի շնչերակները կը կծկուին. այս կերպով մեր ուղեղին և ներսի գործարաններուն մէջ արեան ճնշումը բնականէն վեր կը ցատկի. այս պատճառով ձմեռուան եղանակին կաթուածահարութիւններ, յանկարծակի մահեր յաճախ կը պատահին։

Ուրեմն վայելէ՛ ու սիրէ՛ արեւը բոլոր կեանքիդ մէջ, եթէ կ'ուզես ապրիլ առօրէջ ու կայտառ, միշտ անոր հետ շրփման մէջ եղի՛ր, թո՛ղ անիկա թափանցէ քու բնակարանէդ, քու աշխատանոցէդ եւ քու մօրթիդ բջիջներէն ներս, քան զի նա է որ քեզի առողջութիւն, բուժում ու երջանկութիւն պիտի պարգեւէ։

ՉՈՐՍ ՏԻՊԷ ՀՍԿԱՅ ՔԱՐՈՁԻՉՆԵՐ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. ՍՏԱՆԱԼԵԱՆ

2. ՊԻԼԻ ՍԱՆՏԷՅ

Աւետարանիչին անունը ու համբաւը լսած ըլլալու էք։ Ասիկա միւսէն բոլորովին տարբեր տիպէ քարոզիչ մ'է։

Այս ալ 70 տարեկանի մօտ է. փոսպոլի չէՖ է եղեր, 39 տարի առաջ ապաշխարած ու ինքզինքը քարոզելու նուիրած է։ Սակայն դեռ կը պահէ ֆուտպոլ

խաղի մտայնութիւնը, շարժումները ու թեթեւութիւնները: Մարդիկ (էթէթիք) քարոզիչ է:

Ասոր ժողովուրդը հասարակ մահկանացուներ են, խման, խաղամու, ու բնաւ եկեղեցի չգացողներ: Թէեւ ամէն դասակարգի մարդիկ ալ սիրով գայն մտիկ ընելու կը վազեն:

Այս մարդը շուրջ չէ, — թեթեւաշարժ և կատակախօս է, իր քարոզներուն մէջ միշտ խնդացող, զուարճացնող է. սուր ու զօրաւոր հարուածներ ալ կ'իջնեն և՛ ու ձախ: Քարոզիչները, եկեղեցիի անդամները կը հարուածէ, կը խաբաղանէ. կառավարութեանց ալ դէմ կը խօսի:

Ունկնդիրները քարոզը ընդմիջելով միշտ կը ծափահարեն զինքը, հուրով կը պոռան. երբեմն ալ իրեն դէմ կը պոռան. այսչափ անքաղաքավարներ սակայն քիչ են:

Քարոզի ատեն կը պոռայ, երբեմն անխման կերպով ձեռքը երեսը դնելով մեր արեւելացիներուն շարդի, մանի, երգած ատենը ըրածին պէս հէ... է... է... կը պոռայ:

Աղմկաւոր մը, խուժանավար մ'է: Բարկացած ատենը բռնեցքը կը զարնէ առջևի սեղանին վրայ, երբեմն ալ ժողովուրդին օդին վրայէն կը զարնէ: Երբեմն ոտքով կից կը զարնէ, իբր թէ փռտ-պոլի կը զարնէ...: Եթէ աւելի բարկանայ աթոռին վրան կ'ելլէ, կամ աթոռը կ'առնէ ժողովուրդին նետել կը ձեռացնէ. երբեմն մինչև իսկ իր առջևի սեղանին վրայ կ'ելլէ և անկէ կը խօսի:

Տարօրինակ մարդ մ'է: Եղիա մարգարէին կը նմանի, Յովնանին ալ կը նմանի. տէրվիչ մը...: Եթէ կ'ուզես, «խենդ մը» ալ կրնաս ըսել լուրջ մտայնութեան առջև: Ասիկա ո'չ Մուսիի, ո'չ Թորիի, ո'չ ալ ձիփսի Սմիթի կը նմանի: Անոնցմէ բոլորովին կը տարբերի. Ապրիլի որոտալից անձրեւներուն կը նմանի:

Սակայն պահ մը կեցիր, շուտով չը դատապարտենք: Հազարաւոր ու բաւարար մարդիկ այս մարդուն միջոցաւ դարձի եկած են: Դուն ինչ որ ըսես ըսէ, — խենդ կամ խելացի, Աստուած ասոր միջոցաւ մեծ գործ կը տեսնէ ինչպէս Բաղամին էչն ալ խօսիլ տուաւ:

Բայց ինչ մ'ալ կեցիր, մի' անապատ...: Այս մարդուն քարոզին պայի, 5000 ժողովուրդ տանող եկեղեցիի շէնք մը ժամանակէն 45 րոպէ առաջ լիցուած էր, գուռերը գոցուած ու դրան առջև հարիւրաւոր մարդիկ զիգուած ներս մըտնելու յոյսով կը սպասէին, շատիւ ետ կ'երթային մեզի պէս:

Այս ալ տարբեր տեսակ հսկայ քարոզիչ մ'է: Շատերուն չկրցած գրաւածը, ձգուած, լքուած անհաւատները՝ այս մարդը կը քաշէ, կը հրապուրէ, ու դարձի կը բերէ: Ինչ պիտի ըսես: Աստուծոյ խորհուրդը ո՞վ կրնայ հասկընալ:

Այս մարդը քարոզները կը կարգայ, լաւ պատրաստուած քարոզ կուտայ: Ինքն ալ գիտնական մ'է և ժողովուրդը ժամերով իր շրթներէն կախուած կը պահէ: Ձայնը յոյնածի խապոտ ձայն է, շատ արագախօս է:

Այս տարօրինակ քարոզիչ Աւետարանիչը 6 մասուն համար Անգլիան հրաւիրեց, բոլոր Անգլիոյ մէջ աւետարանչական քահանայները մը համար: Ասիկա Ընդլ Սեմի զաւակն է, դժուարահաճ Անգլիայէ կը հրաւիրուի: Մարդիկ արժէքները կը ճանչնան և անոնցմէ օգտուելու կ'աշխատին:

Բարձր բլուր մը չկայ առանց իր քովը ձոր մը ունենալու:

Վատողին այն է որ կիանքի սանդուխին վրայ իրմէ բարձր եղողին ոտքը կը համբուրէ և իրմէ վարը եղողին գլուխին վրայ կը զարնէ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

8. ՈՒՍՏԻ ՃՇՄԱՐԻՑ ԿԵԱՆՔԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԿՊՊՐՈՒԻ

Թարգմ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Կրեց՝ ՉԵՐԹՔՈՎ

Աշակերտները հարցուցին թէ ի՞նչ վարձք պիտր տրուի մարմինը՝ ֆիզիկական կեանքը ստորագրանելուն։ Յիսուս պատասխանեց. «Ով որ իմ վարդապետութիւնս կ'իրականացնէ աւելի վարձք պիտի չ'ստանայ։ Եթէ մէկը լքէ իր բարեկամներն և ստածուածքները այս վարդապետութեան սիրոյն արգէն հարիւրապատիկը չահած կ'ըլլայ, տակէ շատ աւելին ունենալու փափաքը Հօրը կամքին հակառակ է»։

Երկնային Թաղաւորութեան մէջ ո՛չ մեծ կայ և ո՛չ պզտիկ, ամէնը հաւասար են։ Անոնք, որ իրենց բարութեան իբր վարձք բան մը աւելի կը փնտռեն, կը նմանին այն գործաւորներուն, որոնք գործատիրոջ հետ նախապէս սակարկելու փոքր կ'ընեն աւելին կը պահանջեն պարզ այն դադափարով, որ իրենք ուրիշ գործաւորներէ աւելի կ'արժեն։

Վարձատրութիւն, պարտաւանք, պաշտօնագրկում կամ բարձրացում չկայ անոր համար, որ այս վարդապետութիւնը կը հասկնայ։

Ոչ ոք կրնայ բարձր կամ ցած, աւելի կամ պակաս արժէքաւոր ըլլալ Յիսուսի վարդապետութեան համաձայն։

Ամէն ոք հաւատարմապէս կրնայ Հօրը կամքը կատարել, որով ոչ ոք գերազանց, կատարեալ, կամ լատացոյն կ'ըլլայ քան մէկ ուրիշը։

Թաղաւորներ և իրենց ծառաները աստիճանաւորուած են այդ չափանիշով, բայց Յիսուսի ուսուցումով ոչ ոք կրնայ բարձր ըլլալ։ «Ով որ կ'ուզէ բարձրանալ պէտք է որ ամէնուն ծառայէ։ Իմ ուսուցումով կեանքը մարդուն տրուած է, որ ուրիշներ իրեն ծառայեն, այլ

ինք իր ամբողջ կեանքը պէտք է տայ ուրիշներու ծառայութեան։ Ով որ ինքզինք բարձրացնել կը ջանայ, փոխանակ ծառայելու, առաջուանէ աւելի ցածը պիտի իջնէ»։

Կեանքին նպատակն ու նշանակութիւնը հասկնալով կարելի է ազատիլ վարձատրութեաներու գաղափարէն և մէկի մը բարձրանալու մարմաջէն։ Կեանքին նպատակը Հօրը կամքը կատարելուն մէջն է, ու Հայրը կը կամի, իր տրուածը իրեն զերազարծուի։ Հովիւը հօտը կը թողու կորսուած ոչխարը գտնելու համար։ Կին մը իր կորուստը կը փնտռէ ամէն տեղ։ Հայրը միշտ կը ջանայ զմեզ իրեն քաշել, քանի որ իրեն կը պատկանինք։

Պէտք է հասկնանք ճշմարիտ կեանքը։ Ճշմարիտ կեանքը լոյսի բերուած է այնպէս, ինչպէս կորսուած մը իր տեղը կը բերուի, ինչպէս քնացող մը կ'արթննայ։ Ով որ իր ճշմարիտ կեանքը ունի, ով որ նորոգուած է իր գոյութեան Ազբիրէն չի կրնար աշխարհիկ մարդոց նման ուրիշները իբր լաւ կամ գէշ դատել, հապա Հօրը կամքին մասնակից ըլլալով կ'ուրախանայ կորսուածին դարձին համար։ Եթէ մոլորող ու հայրը լըքող տղայ մը որ մը զղջայ և հոգառնայ, իր հղբայրը ինչպէ՞ս կրնայ տրանջել իր հօրը ուրախութիւնը տեսնելով կամ ինք ինչպէ՞ս կրնայ չ'ուրախանալ իր եղբօր դարձին համար։

Այս ուսուցումի հաւատքին տալանորդելու, ապրելու միակ ճամբան ընտրելու և վարդապետութիւնը կատարելու համար ո՛չ արտաքին ապացոյցներու կը կարօտինք և ո՛չ ալ խոստացուած

վարձքի, հապա ճշմարիտ կեանքի մասին յատուկ հասկացողութեան:

Եթէ մարդիկ խորհին թէ իրենց անձնական կեանքին կատարեալ տէրերն են և թէ կեանքը տրուած է ֆիզիքական զբաղումներու համար միայն, այն ատեն ուրիշի մը համար կատարուած պատարագը կամ զոհը վարձատրուելու արժանի գործ մը պիտի համարեն և ուստի առանց այս ձեւ վճարումի ոչինչ պիտի կրնան շահիլ: Վարձակալ մը մոռցած է, թէ հողը այն պայմանով առած է, որ պտուղը ժառանգորդին տայ, ուստի երբ ժառանգորդը ներկայանայ զայն պահանջելու, կ'ըսպաննէ զայն: Մարդիկ կը նմանին այս վարձակալին, երբ ինքզինքնին անհատական կեանքին տէր կը դառնան և չեն մտածեր կեանքին վրայ ճշմարիտ հասկացողութեամբ: Ասոնց նման են այն մարդիկը, որ իրենց անձնական կեանքին կատարուելը կը պահանջեն:

Հաւատք և գործ հաւասարապէս անհրաժեշտ են, սորվելու համար թէ ոչ ոք կրնայ ինքնիրենն բան մը ընել և եթէ ուէ մէկը իր ֆիզիքական կեանքը ուրիշներուն ծառայութեան նուիրէ ո՛չ շնորհակալութեան և ո՛չ վարձքի կ'արժանանայ: Պէտք է հասկնալ թէ բարիք ընելով պարտականութիւն մը կատարած կ'ըլլայ և կը կատարուի ոյն՝ որ անհրաժեշտաբար պէտք էր կատարուէր: Կեանքի այս ձեւ ըմբռնումով միայն կարելի է վստահութիւնը ունենալ ճշմարիտ բարին գործելու ընդունակ ըլլալուն:

Երկինքի թագաւորութիւնը կեանքի այս ձեւ ըմբռնումին մէջ կը կայանայ: Այս թագաւորութիւնը անտեսանելի է: Կարելի չէ ըսել կամ մասնաւոր թէ այս կամ այն տեղ է հաստատուած: Երկնային թագաւորութիւնը մարդկային հասկացողութեան մէջ է:

Ընկերութիւնը կ'ապրի հինին

նման: Մարդիկ կ'ուտեն, կը խմեն, կ'ամուսնանան, կը գործեն, կը մեռնին և կեանքի ամբողջ տեւողութեան՝ մարդոց հոգիներուն մէջ՝ երկնային թագաւորութիւնը կ'ապրի:

Ան կեանքի հասկացողութիւնն է և գարնան աճող ծառի մը նման ինքնիրեն կը մեծնայ:

Հօրը կամքին կատարումէն բղիտղ ճշմարիտ կեանքը անցեալին կամ ապագային չէ, այլ ներկայ կեանքն է: Այն կեանքը, որ այս մասներկրորդին պիտի ապրինք: Ուստի պէտք չէ ճշմարիտ կեանքը լքել: Մարդիկ սահմանուած են հսկելու ներկայ կեանքին վրայ և ոչ թէ անցեալին կամ ապագային: Եթէ Հօրը կամքը չկատարելով կորսնցնենք այն կեանքը, կարելի չէ զայն վերստանալ: Ծիշդ պահուիլ մը կը նմանի, որ գիշեր մը սպասելու սահմանուած է: Ան պարտականութիւնը կատարած չըլլար, եթէ մէկ վայրկեանի համար քնանալ ուզէ, քանզի կրնայ գողը ճիշդ այդ վայրկեանին գալ:

Ուստի ուժը կեդրոնացնելու է ներկայ վայրկեանին վրայ, գուցէ միայն այդ վայրկեանին կարելի ըլլայ: Հօրը կամքը կատարել: Այդ կամքը կեանք և օրհնութիւն է բոլոր մարդոց համար: Միայն անոնք կեանքը կ'ապրին, որոնք բարիք կ'ընեն: Հիմա, այս ժամուն մարդոց բարիք ընելը կեանք է, կեանք որ մեզ կը միացնէ հասարակաց Հօրը հետ:

Բարեոքման հոգին՝ հոգիին բարեօքումն է:

Առանց երկունքի ծնունդ չկայ:

Չկայ մարդ մը որ իր դէմքը տեսած ըլլայ:

Ինչի՞ կ'օգնէ եթէ մարդ բոլոր աշխարհը կը շահի բայց իր ժպիտը կը կորսնցնէ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

Հետևեալ վկայութիւնը պարզ բայց հետաքրքրական կերպով կը նկարագրէ թէ ողբալիօրէն աւերուած կեանք մը ինչպէ՛ս փրկուած է։ Այսպիսի կեանքի մը փրկութիւնը Աստուածային հրաշք մըն է. և ուրախալի պարագայ մըն է զիտիլ թէ նման հրաշքներ ներկայիս մեր մէջ զանազան վայրեր կը պատահին։ Եկեղեցիներու մէկ կարեւոր գործըն է այսպիսի կեանքերուն փրկութեան համար միջոց մ'ըլլալ։ Ոնէ եկեղեցիի մը գործունէութեան առանձքը կը կազմեն ինկածներու մասին մտածել, անբարոյականներու մասին հոգընել, աւերակ հոգիներու վերականգնումին համար աշխատիլ, մէկ խօսքով մեղաւորները գէպի Բրիտոս առաջնորդել։

ԾՆԹ. ԽՄԲ.

Ես բնիկ Այնթապցի եմ և 1899ին ծնած եմ հոն՝ բարեպաշտ Բողոքական ընտանիքի մը մէջ, որուն կրտսերագոյն անդամն եմ։ Հայրս երբեք չեմ ճանչնար, քանզի շատ փոքր հասակիս մէջ անիկայ մեռած էր։ Բայց թէ՛ մօրմէս և թէ՛ ուրիշներէն լսած եմ որ ան Այնթապի Բ. Աւետ. Եկեղեցիին մէկ տնկաւոր և ճշմարիտ քրիստոնեայ մը եղած էր, և իր աղօթքներովն ու վկայութիւններովը եկեղեցին լեցուցած էր։ Այնպէս որ աստուածավախութիւնը բնական կերպով կ'իշխէր այն ընտանիքին մէջ ուր ես աշխարհ եկած էի։ Ես ալ մանկութեանս միջոցին մինչև 15 տարեկան ըլլալս աստուածավախութեամբ և եկեղեցիի ուսուցման համեմատ ապրեցայ։ Բայց սատանան սկսաւ իմ մէջ աշխարհիկ տենչեր ևս արթնցնել։

Կիրակի օր մը, մինչ Եկեղեցի կ'երթայի, փոխանակ եկեղեցի երթալու թեւադրուեցայ այսինչ տեղ շինուած նոր սրճարան մը մտնելու և հոն գտնուող

ընկերներու հետ զրօսնելու։ Կարծես թէ ուսուցիչ մը եկաւ և անուս աշխարհիկ զպրօցին արձանագրեց, և ինծի զօրաւոր կերպով յանձնարարեց զասերուս ուշագիւր հետեւիլ։ Ես ալ՝ մոռնալով մանկութենէս ի վեր ստացած գեղեցիկ դաստիարակութիւնս՝ որոշեցի և աշխատեցայ սորվիլ սրճարանի բոլոր խաղերը, որոնց շուտով փրփրացայ։ Սկսայ ծխել. ծխախոտի համար քսակ մը առի և զայն մէջքիս զօտիէն կապելով մօրս քով եկայ։ «Ի՞նչ է այս», հարցուց մայրս. և խոժոռ գէմքով մը պատասխանեցի թէ պիտի ծխեմ և թէ ինք գործիս և ընթացքիս միջամուխ ըլլալու իրաւունքը չունի։ Ահա այս կերպով, այս անօգուտ, շատ վնասակար լեզի ծխախոտի համար մայրս սրտաբեկ ըրի, որ զիս իր աչքին բիբին պէս կը սիրէր և իբր սպասուհի ուրիշներուն ծառայելով զիս անուցած և մեծցուցած էր։

Ահա ասկէ ետքը աշխարհիկ զպրօցին առաջին կարգը մտայ։ Այսօր ծըխախոտ ծխելով, վաղը օդի կոծեւելով, ուրիշ օր մը անբարոյիկ թատրոն յաճախելով սկսայ ամէն բանի մասնակցիլ. իմ իշխանիս, սատանայի, առաջնորդութեամբ ամէն բան լրացուցի։ Շաբաթներով տուն չեմ երթար, ուր որ օդի խնճոյք մը կայ ես հոն եմ. նման հաւաքոյթներու մէջ երբեք բացակայ չեմ եղած։ Երբ անունները կը կարդացուին ես հոն ներկայ կը գտնուիմ։ Այնպէս որ շատ չտնցած այս զպրօցէն վկայականս առի, աշակերտներ ժողվելով անոնց ուսուցիչ կարգուեցայ։ Քիչ ետքը հայրենիքս և մայրաքաղաքի Ատանայ գաղթեցի, ուր՝ իրենց հայրենիքէն և ծնողներէն փախչողները կրնային համարձակ զրօսնել։ Բայց սատանան ալ հետս էր և օձիքս չէր թողուր։ Վերջապէս ան՝ այս անիծեալ պանդխտութեան

մէջ զիս այնպիսի ծանր փորձանքներու ենթարկեց որ կեանքէս զգուեցայ, և խորհելով որ եթէ չամուսնանամ չպիտի կրնամ այս փորձանքներէ ազատիլ, աղքատ օրիորդի մը հետ ամուսնացայ, և փոխուեցայ: Առաւօտուն գործիս կ'երթայի եւ իրիկունը տուն կը վերադառնայի, եթէ օդի խմել ուզէի տունը կը խմէի: Ես ասոր յօժարեցայ քանզի խորհեցայ որ մարդու վայել կեանք է այս: Օգիտի գրեթէ գերին դարձայ, և սկսայ հետզհետէ աւելի խմել:

Իբր տարազիր հայրենիքը ձգեցինք եւ Սուրիա եկանք. բայց օդին միշտ հետս էր: Քանզի ինքզինքս սփոփելու կերպ մը գտած էի խորհելով՝ որ իմ օդի խմելս ռեւէ մէկուն չի վնասեր եւ թէ ես ռեւէ մէկուն հետ չեմ կուտիր: Այսպէս դժուարութեամբ վտառեալ որամիտս գիւրութեամբ կը վատնէի թունաւոր խմելիքի համար:

Սատանան այս ապրելակերպովս գոհ չմնաց, իր չարագուշակ թաթը դրաւ տունիս վրայ, իր զրօշը կանգնեց տունիս փառաւոր անկիւնը. կնոջս հետ զիս կուռիլ տուաւ. ո՛հ, ինչ ողբալի վիճակ: Եւ սատանան իր նպատակին մէջ յաջողեցաւ, տունս քանդեց, երկու ամուսինները իրարմէ զատեց, և մէկ կողմ քաշուած խնդալով զիս դիտեց: Ահա սատանային ընկիւթը, իցիւ թէ վերջինը ըլլար այս: Զիս ովկիանոսի արիքներուն յանձնեց, և ես սկսայ յուսահատական պայքարի մը: Յիրաւի ի՛նչ դառնակակիծ վիճակ, ի՛նչ ողորմելի կեանք: Ծարաթներ անցան տակաւին ես թափառամիտ կը չըջէի, և կը խորհէի թէ արդեօք ո՞ր կրնայի խաղաղութիւն գտնել, ծովուն յատակը թէ լեռներուն զագաթը: Բայց իզուր, այս ահզեր խաղաղութիւն չկայ:

Դեկտեմբեր երեքի գիշերն էր. ո՛հ, ի՛նչ սիրելի թուական մը, զոր կ'արժէ ոսկեպօծ տպուկով զարդագրել: Տունը,

ուր առանձինն կ'ապրէի, յուսահատ կերպով վիճակս կը խորհէի. սկսայ ինծի արուած թերթիկ մը կարդալ, որուն նիւթն էր «Փրկուած Երկու Բանտարկեալներ»: Մինչ ես գայն կը կարդայի վերաւոր ձեռքերով մէկը սրտիս դուռը կը զարնէր և կարծես ինծի կ'ըսէր. «Ահա առիթ մը, առանց յապաղելու սիրտըդ ինծի բաց, բեռդ ես կը կրեմ, ծանրութիւնդ ես կը վերցնեմ և քեզի խաղաղութիւն կուտամ»: Իսկ ես անցեալս վերջիչելով կը խորհէի թէ չեմ ընդունուիր, հաեւարար մեծ սարսափով մը կը զոզողայի: Արշալոյսը ծաթեց բայց սրտիս մէջ կռիւ մը կը շարունակուէր, և մարմինէս քրտինք կ'արտահոսէր, իսկ ես տակաւին չէի քնացած և խաղաղութիւն չէի գտած:

Թերթիկը անգամ մ'ալ կարդացի եւ ապա ըսի. «Յիսուս, որ ոճրագործը իր մեղքէն և յաւիտեական զատապարտութենէն ազատեց, կրնայ զիս ալ սա գերութենէն ազատել»: Ու անմիջապէս լալով և աղաչանքով Փրկչիս ոտքերը ինկայ և աղերսեցի. «Ո՛ր Յիսուս, շատ մեղքեր ունիմ, զիս մի՛ պատժեր, ներէ՛ ինծի»: Եւ Այն ձեռքէս բռնեց, զիս վերցուց ու կուրծքին վրայ սեղմեց, եւ զիս իր արիւնովը սրբելով իր Հօրը ներկայացուց: Եւ Հայրը սիրտս սիրով, ուրախութեամբ և խաղաղութեամբ լեցուց: Յաւիտեանս փառք Անոր Անուան: ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՎԱՍՈՅԵԱՆ

Մենք աւելի նիւթական զարդացումի չենք կարօտիր, այլ աւելի հոգեւոր զարգացումի: Մենք աւելի իմացական ոյժի չենք կարօտիր, այլ աւելի բարոյական ոյժի: Մենք աւելի գիտութեան չենք կտրօտիր, այլ աւելի նկարագրի: Մենք աւելի օրէնքի չենք կարօտիր, այլ աւելի կեանքի:

ՔԵԼՎԻՆ ՔՈՒԼԻՃ

1930Ի ԳԻՏԱԿԱՆ ՅԱՌԱՋԱՅՈՒՄՆԵՐԸ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Գրեց՝ ՏՈՐԹ. Ս. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ.

Ռէօնդկէն Խօսող—Ֆիլմի միջոցաւ խուչափողի, լեզուոսկրի և լեզուի շարժումները տեսանելի և նոյն ատեն ձայնը լսելի դառնալով ան սկսաւ մեծ ծառայութիւն մատուցանել իտալիոս դաժտաբարակման:

Ծծումբի ոքսիտացած բաղադրութեան մը միջոցաւ մուկերու քաղձկեղի (Cancer) յատկացումը յապաղուած և նոյն իսկ մէկ հատը բոլորովին անհետացած է. կրկին նոյն նիւթի ուրիշ բաղադրութեան մը միջոցաւ անբուժելի նկատուած յամուռ վէրք և պալարներ կատարելապէս բուժուեցան:

Մակերիկամային պատեանէն (Adrenal Cortex) պատրաստուած մասնաւոր նիւթի մը միջոցաւ՝ քաղձկեղի ուռեցքները հալեցնելու յաջող փորձեր մեծ յոյսեր սկսան ներշնչել:

Փոխանակ մէկի մի քանի ճառագայթումի (Radiation) գործածութիւնը սկսած է յառաջ բերել մորթի հզօրագոյն թուլատրելի վիճակ մը, խորունկ ուռեցքները դարմանելու համար:

Կրկին, հլեկտրա-վիրաբուժական դարմանումը սկսաւ յաջող արդիւնքներ ցոյց տալ:

Ամերիկայի ժողովուրդին կէսէն մինչև ինը տասներորդը թոքախտի մանրէների մէջերնին կրած բլաւնին ստուգուելով, որոշուեցաւ ամբողջ բնականութիւնը Բ. ճառագայթներու ենթաբկել տալ՝ կասեցնելու համար այդ սոսկալի մահացու ախտը:

Տօքթ. Հան յաջողեցաւ թոքախտի մէկ տեսակ մանրէն փոխարկել մէկ ուրիշ թոքախտի տեսակին:

Թոքախտէ վարակուած կենդանիի մէջ քաղցրին (Glycerin) ներմուծելով

տեսնուած է որ թոքախտի միջբրպնէրը սկսած են արագութեամբ բազմապատկուիլ:

55.74 տարիներու միջև պատահած մահացու արիւնատուութեան ենթակայ (Pernicious Anæmia) ենթակայ հիւանդներու լեարդի իսկութիւն տալով մահաթիւը սկսաւ կէսի իջնել:

Ճշգուեցաւ որ՝ կենսամին B ի (Vitamin B) պակասը սննդեղէններու մէջ յառաջ կը բերէ հիւանդութիւն մը որ շատ կը նմանի մահացու արիւնատուութեան:

Դարձեալ գտնուեցաւ որ կովի միսի մկանունքներէն պատրաստուած պրօտէիններ (Protein) սկսած են բուժել կենդանիներու մէջ մահացու արիւնատուութեան հետեւանքը եղող անդամալուծութիւնը:

Մանկական անդամալուծութեան (Infantile Paralysis) պատճառը՝ ողնայարի ծուծի մկանունքները կառավարող ջիղերու բջիջներուն արգիւնք բլաւը հաստատուեցաւ:

Ապաքինողներու արիւնէն պատրաստուած շիճուկ մը բացարձակապէս կը բուժէ ենթակայ՝ եթէ ներմուծուի հիւանդին նախ քան անդամալուծութեան շրջանը:

Իգական սեռի յատուկ Հօրմօնը (Hormon) մեկուսացուեցաւ, պետազերութեան իրաւունքը տրուեցաւ Սէյնթ Լուիզ համալսարանին:

Ռատիօ-Թորիոնը կը փճացնէ կենսամին (A) ն, որ աճումի աւեհնամիծ ազդակն է և արգիւք կը հանդիսանայ կարգ մը աչքի հիւանդութեանց:

Կարմրախայտի (Սալամօն պալըրը)

իւղը՝ ձկան իւղի երկրորդ ըլլալով՝ կ'արգիլէ ոսկրաթեքութիւնը՝ (Rickets) պարունակած ըլլալով կենսամին D:

1930 ի մէջ ճշդութեամբ թէ տարինս լինի ենթամորթային ներարկութեամբ, և ներարկուած մասին շփումով յառաջ եկած 24 ժամուայ արեան բարձր ճնշումը՝ մեծ արժէք կ'ունենայ վիրային ցնցում (Traumatic Shock), կապոյտ հազ, շնչարգելութիւն և բարեջերմի (hoy fever) բուժումին մէջ:

Պահածոյ կարմրախայտը կը պարունակէ իւր մէջ այնպիսի նիւթ մը՝ որ կ'արգիլէ մորթախտը (pellagra):

Կարգ մը համալսարաններու կողմէ հազորդութեամբ թէ՝ մակերիկամային պատեանէն (adrenal cortex) խիստ զօրաւոր նիւթ մը պատրաստուած է:

Կրկին յայտնուեցաւ թէ մարդու արեան մէջ կրածինի (calcium) պակասը պատճառ կ'ըլլայ մարդուս զիւրաբորբոքումի, ջլայնութեան զւերազերգութեան և յուսալքութեան նման անկարգութեանց:

Մաղսասային իսկութեան (Pituitary Extract) ներարկումը սկսած է լեարդի միջոցաւ ճարպը հալեցնել, հետեւաբար չափազանց զիրութիւնը այս զեղծի անկանոն գործունէութեան արգիւնք ըլլալը որոշ է:

80 լուսնոտ կիներէն 32ը մեծապէս կըրցած են օգտուել՝ ուտելով ճարպոտ կերակուրներ իսկ քիչ քանակութեամբ շաքար եւ օսլայ (նիշէ):

Կարճ բատիոյի ալիքներու ենթարկուելով մարդուս մարմինը սկսած է արուեստական ջերմութիւն յառաջ բերել, ասիկայ նոր դուռ մը պիտի բանայ փոխանցիկ հիւանդութիւններ մանրէներուն վրայ:

Անդր—մանիշակային (ultra-violet) ճառագայթներու կիրարկումով երկթթուիտ բնածուսի (ածուսի թունա-

ւորման) զոհեր սկսած են բուժուիլ: Ք. ճառագայթներու միջոցաւ արեան ճերմակ բլիշներու փճացումը՝ ըսկսած է մանրէները փճացնող նոր հիւթ մը մէջտեղ բերել:

Մեղմ արագութեամբ ելեկտրոններու ուժակոծումով սքսփիլոֆօրս աշխարհաշուած մանրէները՝ կատարեալ յաջողութեամբ փճացնելու յաջողութիւն ձեռք ձգուեցաւ:

Ձմերուկի կուտերու մէջէն մասնաւոր կենսահիւթ մը՝ հաստատուեցաւ որ արեան բարձր ճնշումը զգալի կերպով կ'իջեցնէ:

Պրոտէիդով (proteid) ծանր կերակուրի մը սրտի բաբախումները 25 օ/օ—50 օ/օ աւելի զարնել տալը ստուգուեցաւ եւ այս թափը կրնայ 15—20 ժամ շարունակել:

Շաքարի լուծումին ներերակայ ներմուծումը վերոնալէն (veronal) թունաւորութիւնը սկսած է ազատել:

Անմարսողութիւնէ և փորի գանգատներէ տառապող 500 հիւանդներէն գրեթէ ամէնքը (ի բաց առեալ 12ը) մաղձային փամփուշտի (gall bladder) հետեւանք ըլլալը 1930 տարին ստուգեց:

Յարգ մեծածաւալ այրուցքներէ թունաւորուելով մեռնողներու թիւը չափէր, իսկ 1930ը գտաւ մասնաւոր զիւր մը որ այրած մորթին վրայ փչուելով 2րդ աստիճանի այրողներու կեանքիւր փըրկուած են:

Տոքթ. Պիր մասնաւոր թրթուրի մը գարմանումի հետեւանք 300 ոսկրաւոր-նուղղատապէ (osteomyelites) տառապող բոլոր պատիկները, իսկ մեծերուն 80 օ/օը կատարելապէս բուժուած ըլլալնին բժշկական աշխարհին տեղեկացուց:

Կապոյտ հազի (պոդմաճա) կանուխ ախտաճանաչումը դիւրացած է, ապակիի մը վրայ քոնկով խաշած գետնախնձոր, կլիսէրին, ալար, եւ արիւնի նօսք խաւ մը:

ՄԱՍՈՒԼ

ՄՕՐԸ ՎԵՐՔԸ ԶԷ ՍՊԻՍՅԱԾ

(ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀՕՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ)

«Սրոն» ի 1931. Յուլին, 1 ի մէկ խմբագրականէն արտատպուած : Ծ. Խ.

Ճշմարտապէս սրտի անհուն սեղմումով մըն է որ մարդ կ'ընթեռնու այն Յայտարարութիւնը, զոր ըրած է հրապարակաւ Աւետարանական Դաւանութեան Պատկանութեան Ուխտ անունով նորահազմ մարմին մը Գահիրէէն՝ տեղւոյն Հայ Աւետարանական համայնքին հովիւ Վեր. Հ. Համբարձումեանի «մոլար ուսուցումներէն» գայթակղած :

Այդ մոլար ուսուցումները բազմաաեսակ են : «Արդիականութիւն» ընդհանուր անունով կրնայի՛նք բացատրել զայն՝ եթէ այդ բառը ճշգրիտ իմաստ մը լովանգակէր : Յայտարարութիւնը կ'ըսէ, (և մենք անոր չփտահելու պատճառ մը չունինք) թէ Պատուելին կ'ուրանայ «Արդոց անսխալական հեղինակութիւնը և յայտնութիւնը, Բրիտանիոյ գերբնական ծնունդը, Անոր գործած հրաշքները, յարութիւնը գերեզմանէն՝ «նովին մարմնով», երկրորդ գալուստը և Ս. Հոգւոյն անձնաւորութիւնը երրորդութեան մէջ» : Պատկանութեան Ուխտը դիմելով «Հ. Ա. Եկեղեցւոյ Ժողովներուն», կը պահանջէ հրաժարումը յիշեալ քարոզչին և անոր փոխանակումը «հաւատաւոր հովիւ և Բանին հաւատարիմ քարոզիչ» եղող անձով մը : Ուխտը կը յայտարարէ թէ իր «հանդանակը Նիկիոյ Աննէն է, և միակ կանոնը հաւատոյ և կեանքի Ս. Գիրքը» : Վասնզի, անոնք կը յայտարարեն, «Կեանքը կը հետեւի դաւանութեան» (ընդգծումը մերն է) : Անոնք կը յայտարարեն, թէ «Աւետարան»

ւանութիւնը սուրբ է» իրենց համար և «ան քուէի չգրուիր» : Յետոյ կ'ամրապանեն «Եկղց. և Քաղաքական Ժողովները» անոնց թուլութեան և «դաւանութեան սրբութեան» հանդէպ անոնց ցուցուցած «արհամարհանքին» համար :

Մենք կը խորհինք թէ յիշեալ Յայտարարութեամբ բողոքողները հակասութեան մէջ են : Բողոքականութիւնը Ս. Գիրքին բանէն և բառէն զատ ուրիշ ոնէ հեղինակութիւն չի ճանչնար՝ քանի որ պատմական եպիսկոպոսութիւն չ'ընդունիր և առաքելականութեան (այն իմաստով որ ուղղափառ եկեղեցիներ կը սահմանեն զայն) սկզբունքը անհրաժեշտ չի նկատեր : Երգ՝ ո՞վ իրաւունք կուտայ խումբ մը մարդոց՝ որ Ս. Աւետարանը իրենց հասկցածին համեմատ մեկնելով դաւանութեան բանաձեւներ հանեն անկէ, կամ հանումները ընդունին, և այն ալ՝ պայման դնեն ճշմարիտ քրիստոնէութեան : Եթէ այդ խումբը կը կարծէ որ պատուելին չաւրափառ է, ժողովներուն հետ միասին՝ պատուելին ալ հակառակը կը խորհի. և որովհետեւ հաւատաքը «քուէի չգրուիր» ուստի պատուելին և «Ուխտ»ը հաւատարապէս իրաւունք ունին :

Բողոքական ըմբռնումին ուղղակի եղբակացութիւնն է այս : Եւ զիւրին է տեսնել թէ ո՛րքան վատնչաւոր :

Անգամ մը որ դաւանանքը էական նկատուի՝ անհրաժեշտ կը հեռի տիեզերական ժողովներուն իշխանութեան ճանաչումը՝ անոնց Ս. Գիրքէն դաւանութեան բանաձեւներ հանելու իրաւաւ :

սութեան վերաբերմամբ: Եւ առկէ ան-
միջական կը հետեւի եպիսկոպոսութեան
իշխանութիւնը, և անկէ՝ անոնց պետի-
նը: Այս ուղիղ դիրքը որ ուղղափառ
եկեղեցիներունն է՝ բողոքականութիւնն
մերժուած է: Եւ հետեանքը հեշտ է
դիտել ամէն կողմ, մեր մէջ և մեզմէ
դուրս: Հիմնական խնդրի մը հարեանցի
մէկ՝ ակնարկութիւն է այս. բայց մեր
միտքը կրնայ քիչ մը բացատրել:

Եւ դաւանանքին կարեւորութիւնը
լաւ կը շեշտուի Յայտարարութեան մէջ:
Հոն ըսուած է. «Կեանքը կը հետեւի
դաւանութեան». ուղիղ դատում: Բայց
այս՝ ուղղափառ եկեղեցիներո՞ւ յատուկ
սկզբունք է, որ լուսաւոր կերպով կը
տեսնուի Յայտարարութեան խմբագրող-
ներուն կողմէ: Վասնցի շատ միակող-
մանի և անօգուտ է այն ծուռ եւ չա-
փազանցուած շեշտը՝ որ կը դրուի «քը-
րիստոնէական կեանք» բացատրութեան
վրայ՝ անոր աւելով լոկ բարոյական բու-
վանդակութիւն մը, և զայն վերածելով
անարմատ ծառի մը: Դաւանանքը կը
նետուի հեռուէն, ու անտես կ'ըլլուի,
որպէս թէ միտքը բնաւ դեր մ'ունեցած
չըլլար քրիստոնէի կեանքին մէջ: Թէ
որո՞նք, ինչո՞ւ այսպիսի միակողմանի
տեսութիւն մը, որ սամկին համար հը-
րապուրիչ բայց ի վերջոյ վտանգաւոր
կարգախօսներ կը հայթայթէ, յառաջ
կը քշին՝ հասկնալի է. բայց անցնինք:

Ծանօթ են այն հանգամանքները ու-
րոնց ներքեւ «Հայ Աւետարանական
Հասարակութիւնը» (միլլէթ) բաժնուե-
ցաւ Մայր Եկեղեցիէն՝ վէրք մը թողլով
անոր սրտին վրայ: Այդ հանգամանք-
ները, միւթարական է ըսել, չեն տի-
րեր այսօր նոյն կերպով կամ նոյն չա-
փով: Յայտարարութիւնը խմբագրողնե-
րուն նման Հայ Աւետարանականները գո-
նէ ի՞նչ բան կը բաժնէ արդեօք Մայր Ե-
կեղեցիէն: Եթէ Հայ. Եկեղեցին ներ-
քին անդործութեան մատնուեցաւ ժա-
մանակի մը համար զուտ քաղաքական

պատճառներով՝ ի՞նչ արդարացում ունի
զայն միշտ այդպէս անդործ տեսնելու
յուրեղանութիւնը: Եւ յետոյ Հայ Աւե-
տարանականութեան շուրջ մէկ դարու
կեանքի փորձառութիւնը կ'առաջնոր-
դէ՞ այն եզրակացութեան թէ տակաւին
հարկ է իրեն համար մնալ բաժնուած:
Գոնէ անհատները ուղի՞ղ կը տեսնեն
բաժնուած թողուլ իրենց ուժը Հայ աղ-
գին քրիստոնէական փրկութեան հա-
մար աշխատող Եկեղեցւոյն ուժէն:

Առհասութիւնը երբեմն մի՛ծ խոչըն-
դատ մըն է. պէտք է ճամբու վրայէն
մէկդի գլուորել զայն:

Մայր Եկեղեցւոյ սրտին վէրքը,
արուած իր զաւակներուն հեռացումո-
վը՝ զեռ չէ բուժուած: Փամանակը Լճր
է զայն սպիացնելու մի անգամ ընդ
միշտ:

«ՀՐԵՂԷՆ ՍԻՒՆ» ԿԸ ԳՐԷ.—

ՍԵԼԱՆԻԿ «Փարս Յիսուս Բրիտանո-
սի» անուամբ Երևանսարգոյց Միութիւն
մը կազմուած է մի քանի տարիներէ ի-
վեր Սելանիկի մէջ: Հրեղէն Սիւնի
խանդավառ համակիր, եղող այդ երիտա-
սարգները կը գրեն. «Մենք Լուսաւոր-
չական և Բողոքական Հոգեւէր Երիտա-
սարգներ ենք. առաջ կէսէն մէկ աւելի
Լուսաւորչական էին. այժմ 2 առաւե-
լութեամբ Բողոքական: Իրականու-
թեան մէջ ոչ յարանուանական: Բողո-
քական բեմը մեր հողեկան պէտքերուն
զահացում չտար: Մեր կարօցած «Ող-
ջամիտ Վարդապետութիւնը» չբարոզ-
ուիր հոն: Ուստի, հոն գտնուող մէկ
քանի Բողոքականներս ալ ստիպուած
ենք անոնցմէ հեռու մնալ:

Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան
պարագային, մեր Բողոքական ծագում
ունեցող եղբայրներէն շատեր պատ-
րաստ են անոր ծոցը նետուելու:»

Սակայն Լճր և ի՞նչպէս պիտի բա-
րեկարգուի ան, ա՛յս է հարցը: Ծ. Սմբ.

ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ: Վեր. Կ. Յ. Յարութիւնեան Փետր. 4—12 ին այցելած է Գլըրզխտանի, Պէյլանի, Աղեքսանգրէթի և Ֆարթըսլիի եկեղեցիները: Աղեքսանգրէթի եկեղեցիին մէջ կիրակի օրուան երկու պաշտօնները կը կատարէ. առաւօտուն կը քարոզէ «Աստուծոյ մօտ ըլլալ» նիւթին վրայ բնաբան ընտրելով Բարի Սամարացիի առակը. իրիկունը կը կատարէ Ս. Հաղորդութիւն և կը խօսի Քրիստոսի տեւական ներկայութեան մասին Իր Եկեղեցիին մէջ. նոյն ատեն կը կատարէ նաև մկրտութիւն: Ֆարթըսլիի և Գլըրզխտանի եկեղեցիներուն մէջ կը խօսի «Պենտեկոստէի յարաբերութիւնը քրիստոնէական կեանքի բոլոր մարզերուն հետ» նիւթին մասին: Պէյլանի մէջ կը կատարէ պսակի արարողութիւն եւ Ս. հաղորդութիւն: Յիշեալ չորս եկեղեցիներուն մէջ կրօնական պաշտօններէն վերջ յանձնարարութիւններ կ'ընէ հոգեւոր տուրքը աւելի կանոնաւոր և առատաձեռնութեամբ տալու մասին: Թէ՛ քարոզները եւ Թէ՛ ժողովները վկայած են որ ամէն տեղ այս մասին զգալի յառաջդիմութիւն եղած է:

ՀԱԼԷՊ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿԵԱՆՔԷՆ: Վեր. Կ. Յ. Յարութիւնեան Բամազանի տօնին առթիւ արաբախօս Երիցական աւետարանականներու հովիւը, Վեր. Ապտիւլ Քէրիմ Գօմի ընկերակցութեամբ պաշտօնական շրջանակները կ'այցելէ Հնորհաւորութեան համար:

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան Յունուարի և Փետրուարի վերջին չորս քարոզներուն մէջ խօսած է «Քրիստոսի Աստուածութիւնը» նիւթին շուրջ, որ կը կազմէ քրիստոնէական եկեղեցիին հիմնական մէկ վարդապետութիւնը, և զոր կը փաստէ 1. Անոր անմեղ կեանքէն

2. Իր մասին Անոր վկայութիւններէն, 3. Նոր Կտակարանէն առաքեալներու վրայ ունեցած ազդեցութիւնէն, 4. 20 դարերու եկեղեցական պատմութենէն:

Վարդանանցի համազգային տօնին առթիւ Եկեղեցիի Զանից Ընկերութեան Երիտասարդներուն կողմանէ կը բեմադրուի գաղափարի ազգային հերոս, Վ. Մամիկոնեանի տրամը յոյժ տպաւորիչ և յուզիչ կերպով: Դերակատար երիտասարդները այնպիսի կենդանի շունչ մը կը դնեն կտորին մէջ որ իրենց հետ միասին կը լացնեն յոգնախուռն ներկայութիւնը: Մեծապէս Հնորհաւորելի են մեր երիտասարդները և բոլոր աշխատողները այս անակնկալ յաջողութեան համար:

ԱՄԱՆԷՆ, Անդր Յորդանանի մայրաքաղաքէն կը գրուի.—

Վեց տարիէ ի վեր հոս կ'ապրիմ, առանց եկեղեցիի և Աւետ. բեմի: Թէպէտ հոս Կաթօլիկ, Յոյն Օրթոտոքս, Անգլ. Երիցական և Ամերիկեան Պենտեկոստէի Եկեղեցիները կան՝ չեմ կրնար անոնցմէ պէտք եղած չափով օգտուիլ արարելէն չգիտնալուս պատճառաւ: Պենտեկոստէի Եկեղեցին Պաղտատէն քարոզիչ մը բերել պիտի տայ հայերուն համար: Հոս հայութիւնը 30 ընտանիքներէ կը բաղկանայ, որոնց վեցը Աւետարանական են:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ, Հալէպ, 120ի մօտ ընթացաւորաւորները Վարդանանցի տօնին առթիւ գեղեցիկ հաւաքոյթ մ'ունեցած են, ուր ծերունազարդ Տիկ. Մարիամ Գունտաքճեան օգտակար զբոլութիւն մը կարդացած է «Մեր Նամակները» նիւթին վրայ: Ուսումնաւարտուհիները իրենց արեւ մաքիւրին օժանդակելու համար զոյացուցած էին կարեւոր գումար մը, որ Պատերազմի միջոցին կորսուած է: Բայց ասկէ չյուսահատելով զոգնելի կորուզով 40 օսմ. ոսկի գու-

մար մը կրցած են մէջտեղ բերել նոյն նպատակի համար:

ՊՈՍԹՈՆԱԲՆԱԿ ՏԻՐԱՐ ՃՈՐՃ ՆԱԳԱՐԵԱՆԻ, բնիկ Այնթապցի Գրիգոր Աղա Նաղարեանի զաւկին, և Օր. Լուսին Լեւոնեանի պսակի արարողութիւնը կատարուեցաւ Վեր. Կ. Յ. Յարութիւնեանի կողմանէ, Հալէպի Ազիզիյէի Եկեղեցիին մէջ, մեծ թիւով բարեկամներու և ազգականներու ներկայութեան: Հարսին Երզնի իմամբէն եղող ընկերուհիներուն կողմանէ կատարուած երգերը շատ հաճելի էին: Մեր շնորհաւորումները:

ՀԱԼԷՊ, ԱԶԻԶԻՅԷԻ Հայ Աւետ. Եկեղեցիի տարեկան տեղեկագրէն. տեղեկագիրներ կարգացուեցան, Զանից Բնկերութիւններու, Մանկանց Կ. Դպրոցին, Նախակրթարանի Հոգաբարձուքեան, Եկեղեցիի Խնամակալ Ժողովին և Հոգաբարձութեան, Սարկաւազներուն, Այցելու մարմինի, և Հովուի կողմանէ: Երկու Զանից ընկերութիւնները ունին մօտ 200 անդամներ, Մ. Կ. Դպրոցը՝ 17 կարգեր և 220 կանոնաւոր յաճախող մանուկներ, Նախակրթարանը՝ 11 ուսուցիչ և ուսուցչուհիք և 300է աւելի աշակերտներ, բոլոր ժողովուրդը կը բաղկանայ 500 ընտանիքներէ: 12 կիներէ և 12 այրիներէ բաղկացեալ այցելու մարմինը կատարած է 1000 այցելութիւններ, իսկ Հովուը՝ 650: Ծնունդի առթիւ 120 ընտանիքներու օգնութիւն եղած է: Եկեղեցիին տարեկան բոլոր պիւտճէն եղած է աւելի քան 1000 օսմ. տսկի: Տարուան միջոցին ընդունուած են 35 նոր անդամներ:

ԱՐՁԱԳԱՆԳ

ՎԵՐՋԻՆ 30 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՋՈՑԻՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԱՍԸ ՆՇԱՆԱԻՈՐ ԴԷՄՔԵՐ: «Հ. Կոչնակ»ի կողմանէ կատարուած հարցառանի մը տրուած պատասխաններուն համեմատ առաւելագոյն փուխ սեացած են

Խրիմեան Հայրիկ, Նիլիէ Պատր. Դուբեան, Մաղափա Արքեպ. Օրմանեան, Միքայիլ Ռազ, Բիւզանդ Քեչեան, Ռեքեոս Պերպեան, Հ. Ղեւոնդ Ալիբեան, Մաքեոս Մամուրեան, Փրոֆ. Ա. Պեգեան, Համբարձում Երամեան:

ՊԱՂՏԱՏԻ մէջ տեղացի և գաղթական Հայերու միջև եկեղեցական և կալուածական գործերը վարելու մասին եղած անհամաձայնութիւնը շատ սուր հանգամանք առած է, որուն իբր հետեանք առաջնորդարանի մէջ սաստիկ կռիւ մը ծագած, ամբողջ առաջնորդ հօր հեղինակութեան դէմ ընդվզած, կառավարութիւնը միջամտելով ձեռքակալութիւնները բաժնէ: — ԱՄԵՐԻԿԱՅԻ (Մ. Նահանգներ) Երեսփոխանական Ժողովը Առաջնորդ ընտրած է Ղեւոնդ Եպ. Դուբեանը: — ՀԱՍԻԶԷԻ Հայ Առաք. հասարակութեան մէջ թաղականի խնդիրներու պատճառաւ ժողովուրդը պառակտուած և օր մը դպրոցը փակ մնացած է: — ՊՈՒԼԿԱՐ կառավարութիւնը որոշած է Սոփիայի մէկ առաջնակարգ պողոտային վրայ 100 քառ. մէթր տեղ յատկացնել նոր շինուելիք Հայ Եկեղեցիին համար:

(Դատ. «Ամերիկեան Պրես»ի յօդուածին) բոնցի մըն է, հոս 250 փրօֆեսորներ եւ 5000 ուսանողներ կան:

Պոլկարիոյ զիւղելուն մէջ երիտասարդները դատարարակիւ և համար նոր դրութեամբ ժողովրդային կրթարաններ հաստատուած են: Սոփիայի մէջ նորարաց Ամերիկեան Դուլէճը 400է աւելի ուսանողներ ունի, ասոր հետ կը գործակցին եկեղեցիները: Սեփարանչուհիները անմատչելի նկատուած տեղեր կրցած են մօտք գործել:

Յունաստանի մէջ՝ զլիստոբապէս Թուրքիայէ հոն գաղթած ժողովուրդին մէջ կրթական գործը յառաջ կը տարուի: Ամփոփուած Տր. Մերիլի մեկ փարոգին:

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՃ

Եթէ բնութեամբ խնայողական (economist) ես եւ կը սիրես ամէն բան չափաւոր գնով շինել՝ դիմէ՝

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՃԻ

Բանգի ան՝ ամէն դիւրութիւն ունի ոեւէ մէկէն աւելի զեղջեալ եւ ածան գնով կատարելու ապաստաններդ։ Այցաբարներ, պահարաններ, հասցէներ, փոխգրեր, ստացագրեր, եւ ամէն տեսակ վաճառականական գործեր եւ մինչեւ իսկ զրբեր։

Եթէ ներանաւակ մէկն ես, եւ հազած կօշիկներուդ մէջն իսկ քիչ շատ նորաձեւութեան եւ կոկիկութեան կարեւորութիւն կուսաս, պարսիս դիմել ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՃԻՆ, քանզի՝ մարդու մը յալագրուած գործերը շատ անգամ իր հաւակին հայելին են։

Իսկ եթէ Հալէպ Գուլէնի հանդէպ բարի կամեցողութիւն ունեցող բարեկամ մըն ես եւ կ'ուզես օգնել կարօտ աւակներուն՝ որոնք յարանի միջոցով իրենք իրենց կ'օգնեն. գործերդ յանձնէ Տպարան Գուլէնին, որ երկու տեսակ շահ կ'ապահովէ քեզի, թէ նիւթական եւ թէ բարոյական։

Բանի մը համարտութեան համոզուելու միակ եւ ապահով ճամբան փորձելն է։

ՉԷՐՉԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պէվապէր էլ-Գասապ (գամլու գափը)

ՀԱԼԵՊ

Յարմար գիներով հոս կը ծախուին ամէն տեսակ բուդքեր, բնօրհանութեան գիրքեր, դասագիրքեր, գրասենեակի առարկաներ, Ս. Գրքեր եւ Ս. Գրքի մասեր, կրօնական գիրքեր, քառ-փոսքալներ, եւայլն։

ԴԻՄԵՅԷՔ ԱՆԳԱՍ ՍԸ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՐ

“ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ,,

Ձեռքէ կը ծախուի Չերչեան Գրասան մէջ

Ներանաւակ պերճանքի արծաթեղէններու համար դիմէ՝

ԳՐԻԳՈՐ Ճ. ԽՐԼՈՐԵԱՆԻ,

Սուգ-էլ-Սիլալ (ոսկերիչներու շուկայ) ուր յարմար գիներով պիտի գրենք ամէն տեսակ

ՊԱՏԱՌԱՔԱՂՆԵՐ

ԳԳԱԼՆԵՐ

ՍՓՍԷՆԵՐ

ՍԿԱՀԱԿԱԼՆԵՐ, եւայլն,

առնին առարկաներ եւ ամէն տեսակ զարդեղէններ։

Խնամով կը պատրաստուին նաեւ ամէն կարգի ոսկեղէն զարդեր,

ԱՐԱԳ, ԱԺԱՆ եւ ՆՐԲԱՀԱՇԱԿ

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ» ԿՐ ՆՈՒԻՐԵՆ

ՍՏԱՑԱՆՔ

Տոք. Ա. Ա. Ալբունիան Հալէպէ՝	Բազմավեպ, 1931 ՁԸ. Հասոր թիւ 2
Վեր. Մ. Փափազեանի, Ֆրէզնո	Հանդես Ամսօրեայ, ԽԴ. Տարի թիւ 11-12
Վեր. Հ. Առնեանի, Շիգակո	Հրեղէն Սիւն, 1931 Պ. Տարի թիւ 1
Տոք. Ա. Ճէպէնեան Հալէպէ՝	Կոչնակ Հայաստանի, 1931 ԼԱ. Տարի թ. 5
Տիար Ն. Ճէպէնեանի, Ամերիկա	Բահնիւմա, 1931 ԺԴ. Տարի թիւ 2
Տիկ. Տ. Պայրամեան Նիւ Եորքէ՝	Սիոն, 1931 Ե. Տարի թիւ 2
Հայ Աւետ. Եկեղեցիի Գալաւուրան	

صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE
ՏՊԱՐԱՆ ԴՈՒԷՃ ՀԱՂԷՊ